Գեղարքունիք Համայնքի միջնակարգ դպրոց

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



*«Կրթությունը ազատության ավելի լավ պահապան է , քան մեծաքանակ բանակը»*
*Էդվարդ Էվերետ:*

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ
## ՆԵԼԼԻ ՎԱԶԳԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

(գործունեությունս դպրոցում. 1985-1996 թթ. եղել եմ հաստատության առաջադեմ սաներից մեկը, 2001-2015 թթ. եղել եմ նույն հաստատության ակտիվ մանկավարժ և ծնողխորհրդի նախագահ, 2015-2020 թթ.՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, 2020-2025 թթ.՝ հաստատության զործադիր տնօրեն):

Ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025-2030 թվականների տնօրենի հավակնորդի Դպրոցի զարգացման ծրագիրը:

2025

# ՄՈՒՏՔ

Յուրաքանչյուր պետության համար կրթությունը հանդիսանում է պետության զարգացման գործում ռազմավարական նշանակություն և կարևորություն ունեցող բնագավառ: Կրթության համակարգի առկա վիճակը և հիմնախնդիրները սահմանված են նաև Հայաստանի Հանրապետության օրենքում. «Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության կառույցների և նախաձեռնությունների, ինչպես նաև կրթության կառավարման մարմինների և սոցիալական գործընկերների փոխկապակցված ամբողջությունն է»: Համակարգի աշխատանքն ուղղված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց կրթության իրավունքի լիարժեք իրացման ապահովմանը: Կրթության որակի ապահովումը, հենայունային դեր իրականացնելով կրթության զարգացման գործում, շեշտադրում է այն կրիտիկական կետերը, որոնցից բխելու է, թե ինչպիսի հասարակություն է ձևավորվելու գոյություն ունեցող կրթական համակարգի պայմաններում: Կրթությունը հանրային արժեք է: Այն պետք է նպատակաուղղված լինի տվյալ քաղաքակրթական տեսակի լինելիության ապահովմանը, ձևավորի ազատ և պատասխանատու քաղաքացի: Կրթության միջոցով տեղի է ունենում մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված աշխարհընկալման ձևավորումը: Կրթությունը սերունդների հոգևոր-մշակութային ժառանգության, քաղաքակրթական արժեքների պահպանման և փոխանցման, ինչպես նաև նոր արժեքների ստեղծման պատասխանատվություն դաստիարակող հիմնական համակարգն է: Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից: Այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը և կոմպետենտ աշխատուժ է օրեցօր զարգացող աշխարհում: Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ներկա փուլը հիմնականում ուղղված է կրթության բովանդակության կատարելագործմանը: Իրականացվող բարեփոխումները նպատակուղղված են. ապահովելու որակյալ կրթություն, բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը, կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանեցնելու զարգացման պետական և միջազգային չափանիշներին: Սույն զարգացման ծրագիրը միտված է ապահովելու սովորողների անձնային, սոցիալական և հոգևոր շարունակական զարգացումը և մրցունակությունը ազգային կրթական տարածքում: Ծրագիրը կազմված է հաշվի առնելով կրթության զարգացման ժամանակակից միտումները և ուղղված է դպրոցի առաքելության իրականացմանը:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը: Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին:

Ծրագիրը կազմվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022թ. սեպտեմբերի 22-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին» № 35-Ա հրամանով հաստատված ձևաչափին և

պահանջներին համապատասխան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2024թ․ ապրիլի 14-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի գնահատման չափանիշները» № 484-Ա հրամանի հավելվածի դրույթներին համապատասխան, կրթության ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերին համապատախան, ինչպես նաև հաշվի առնելով Դպրոցի շենքային, ֆինանսական, մանկավարժական և աշակերտական համակազմերի, ծնողական համայնքի, դպրոցում իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկությունները ՝ որպես չափորոշիչներ ընդունելով կրթական համակարգի բարեփոխումների պահանջները:

## ԴՊՐՈՑԻ ԱՆՁԱՆԳԻՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀԱՍՑԵՆ՝

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղարքունիք, Գարեգին Նժդեհի փողոց 1

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝
70.210.00886
ՀՎՀՀ 08406626

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋ՝
https://gegharquniq.schoolsite.am/

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷԼՓՈՍՏ՝
gegharquniq@schools.am

ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 08.10.2024թ Գեղարքունիքի մարզպետի թիվ 564-Ա որոշմամբ:

Իրականացնում է ՝ Նախակրթական, տարրական, հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրեր

ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ՝
1971թ.

- Դպրոցի շենքը - Տիպային, հարմարեցված
- Դպրոցի հողամասի չափը՝1.307 հա
- Շենքի ընդհանուր մակերեսը՝ 2767.30 մ$^2$
- Հարկերի քանակը՝ 3
- Դպրոցի տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի՝ ընդհանուր
- Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝ նախակրթական և միջնակարգ /1-12դաս./
- Աշխատանքային շաբաթ - 5 -օրյա
- Նախագծային հզորություն՝ 387
- Աշխատանքային ռեժիմ՝ միահերթ
- Փաստացի հաճախող աշակերտների թիվը 2024-2025 ուստարում՝ 174
- ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը 2024-2025 ուստարում՝ 4
- Ունի, Ջերմատուն, Մինի ֆուտբոլի դաշտ, Խնձորենիների այգի
- ՀՀ կրթության և Գիտության նախարարի 26.11.2018 թվականի հրամանով դպրոցին տրվել է Նախակրթարանի կրթական լիցենզիա N 0547, 11.06 2018թ՝ Տարրական կրթության լիցենզիա N 1227, 11.06.2022 հիմնական ընդհանուր կրթության՝ N 1217 և Միջնակարգ կրթության N 0972 լիցենզիաներ:
- Դպրոցն ունի կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ /լոգո/:
- Ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ, ինչպես նաև դպրոցական, ֆեյսբուքյան և յութուբյան կայքէջեր /https://gegharquniq.schoolsite.am
  https://www.facebook.com/Gegharkuniksecondaryschool/?locale=hy_AM

Gegharkunik secondary school - YouTube :

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում կրթական գործընթացն իրականացվում է հանրակրթության պետական չափորոշչին, առարկայական ծրագրերին, դասագրքերին համապատասխան:

Արդեն իսկ սահմանված աշխատանքային ռեժիմով, հաստիքացուցակով, տարիֆիկացիայով, ուսումնական պլանով, դասացուցակով, վարչական, մանկավարժական աշխատողների, ԴԱԿ-ի, մեթոդական միավորումների, դասղեկների, նախակրթարանի դաստիարակի տարեկան աշխատանքային պլաններով, ՈւԴԱՊ-ով, ՆԴՎ-ով մեկնարկում է նոր ուսումնական տարին:
Ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծությունը ներկայացնում ենք համապատասխան աղյուսակներով:

**Դասարանների թիվը ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար**

| **Դասարանների թիվը** | **2022-2023 ուստարի** | **2023-2024 ուստարի** | **2024-2025 ուստարի** | **Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)** |
|---|---|---|---|---|
| 1 –ին դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 2-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 3-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 4-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 5-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 7-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 8-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 9-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 10-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 11-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 12 –րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| Ընդամենը | 12 | 12 | 12 | անփոփոխ |

Վերջին երեք ուստարվա ընթացքում դասարանների թվաքանակը փոփոխության չի ենթարկվել. չենք ունեցել երկկոմպլեկտ, եռակոմպլեկտ դասարաններ:
Դպրոցն ունի մեկ ավագ խումբ ունեցող նախակրթարան: /Տվյալները ամրագրված են Դպրոցի ներքին գնահատման մեջ/:

**Ըստ դասարանների սովորողների թիվը ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար**

| **Սովորողների թիվը** | **2022-2023 ուստարի** | **2023-2024 ուստարի** | **2024-2025 ուստարի** | **Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)** |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 23 | 11 | 24 | նվազում, աճ |
| 2-րդ դասարան | 24 | 22 | 12 | նվազում |
| 3-րդ դասարան | 18 | 24 | 21 | աճ, նվազում |
| 4-րդ դասարան | 19 | 17 | 20 | նվազում,աճ |
| 5-րդ դասարան | 20 | 20 | 14 | նվազում |
| 6-րդ դասարան | 17 | 19 | 17 | աճ, նվազում |
| 7-րդ դասարան | 13 | 17 | 17 | աճ |
| 8-րդ դասարան | 10 | 13 | 17 | աճ |
| 9-րդ դասարան | 14 | 10 | 13 | նվազում, աճ |
| 10-րդ դասարան | 8 | 8 | 4 | նվազում |
| 11-րդ դասարան | 7 | 8 | 7 | աճ, նվազում |
| 12-րդ դասարան | 16 | 7 | 8 | նվազում, աճ |
| Ընդամենը | 189 | 176 | 174 | նվազում |
| Նախակրթարան | 23 | 20 | 16 | Նվազում |
| Ընդամենը | 23 | 20 | 16 | նվազում |

Սովորողների քանակի նվազում է նկատվում աշակերտական շարժում: 1-ին դասարանի սովորողների քանակական աճը պայմանավորված է նրանով, որ **2024-2025** ուսումնական տարվա **սեպտեմբերին** առաջին դասարան են հաճախել նաև այն երեխաները, որոնք սահմանված ժամկետում դպրոց չէին հաճախել, և մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը լրացել էր նրանց 7 և 8 տարին: Սովորողների քանակի նվազելու պատճառը հիմնականում արտագաղթն է, իսկ ավագ դպրոցում՝ ուսումը միջին մասնագիտական հաստատություններում շարունակելն է: Հիմնական դպրոցից ավագ դպրոց սովորողների տեղաշարժը 40-50% է: /Տվյալները ամրագրված են Դպրոցի ներքին գնահատման մեջ և փաստացի ցանցային ցուցանիշներում/ կոմպլեկտավորում//:

**Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար**

| Ցուցանիշը | **2022-2023 ուստարի** | **2023-2024 ուստարի** | **2024-2025 ուստարի** | **Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) ,%** |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա հոկտեմբերի 5-ի դրությամբ | 194 | 174 | 178 | Նվազում՝ 11.2 %<br>Աճ՝ 2.7% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | 189 | 176 | 174 | Նվազում՝7.3% 1.2% |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | - | 2 | - | - |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 14 | - | 4 | նվազում |

Սովորողների թվաքանակը ուսումնական տարվա ընթացքում դպրոցում նվազել է, որի պատճառը արտագաղթն է կամ այլ ուսումնական հաստատություններ տեղափոխումը: Աճը պայմանավորված է Արցախից տեղափոխված սովորողներով: /Տվյալները ամրագրված են Դպրոցի ներքին գնահատման մեջ և աշակերտական շարժի մատյանում/:

**Ըստ առարկաների՝ 2023-2024 և 2024-2025 ուսումնական տարիների համար ավարտական դասարաններում իրականացնենք միջին գնահատականների վերլուծությունն:**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը 2024 թ. | | | Տարեկան միջին գնահատականները՝ ըստ հիմնական առարկաների | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին միավորները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու | | 10 | 7 | | 6.8 | 5.7 | | 14.4 | 11.4 |
| Գրականություն | | 10 | 7 | | 6.9 | 6.1 | | 14.3 | |
| Մաթեմատիկա | 17 | | | 7.7 | | | 7.3 | 13.1 | 10.4 |
| Հանրահաշիվ | | 10 | 7 | | 6.4 | 5.4 | | | |
| Երկրաչափ. | | 10 | 7 | | 6.5 | 5.4 | | | |
| Մայրենի | 17 | | | 8.5 | | | 7.5 | | |
| Հայոց պատմություն | | 10 | 7 | | 7.2 | 6.4 | | 14.5 | 12.9 |
| Համ. Պատմ. | | 10 | 7 | | 7.2 | 6 | | | |
| Օտար լեզու /անգլերեն/ | 17 | 10 | 7 | 7.1 | 6.6 | 6.1 | | 15.8 | |
| Ռ. Լեզու | 17 | 10 | 7 | 7.7 | 6.3 | 6.2 | | 12.2 | |
| ֆիզիկա | | 10 | 7 | | 6.5 | 6.2 | | | |
| Քիմիա | | 10 | 7 | | 6.6 | 5.8 | | | |
| կենսաբանություն | | 10 | 7 | | 7 | 6.2 | | 15 | |
| ՆԶՊ | | 10 | 7 | | 8.4 | 8.4 | | | |
| ֆիզկուլտուրա | 17 | 10 | 7 | 8.9 | 8.7 | 8.6 | | | |
| Աշխարհագրութ. / Ես և շրջակա/ | 17 | 10 | 7 | 7.5 | 7 | 5.8 | | 13.5 | |
| Հասարակագիտ. | | 10 | 7 | | 7 | 5.6 | | | |
| Ինֆորմ | | 10 | 7 | | 6.7 | 6.5 | | | |
| Եկ. Պատմ. | | 10 | | | 7.2 | | | | |
| Ընդամենը | 17 | 10 | 7 | | | | | | |

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ նախորդ ուստարիներին,

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը 2025թ. | | | Տարեկան միջին գնահատականները՝ ըստ հիմնական առարկաների | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին միավորները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու | | 13 | 8 | | 6.5 | 6.7 | | | |
| Գրականություն | | 13 | 8 | | 7.3 | 6.1 | | | |
| Մաթեմատիկա | 20 | | | 7.5 | | | | | |
| Հանրահաշիվ | | 13 | 8 | | 6.3 | 5.7 | | | |
| Երկրաչափություն | | 13 | 8 | | 6.3 | 5.6 | | | |
| Մայրենի | 20 | | | 7.6 | | | | | |
| Հայոց պատմություն | | 13 | 8 | | 7.3 | 6.4 | | | |
| Համ. Պատմ. | | 13 | 8 | | 7.3 | 6.5 | | | |
| Օտար լեզու /անգլերեն/ | 20 | 13 | 8 | 7.1 | 7 | 6.5 | | | |
| Ռ. Լեզու | 20 | 13 | 8 | 7.2 | 6.8 | 6.3 | | | |
| ֆիզիկա | | 13 | 8 | | 6.69 | 5.8 | | | |
| Քիմիա | | 13 | 8 | | 7.1 | 6.4 | | | |
| կենսաբանություն | | 13 | 8 | | 7.3 | 6.3 | | | |
| ՆԶՊ | | 13 | 8 | | 8.23 | 7.2 | | | |
| ֆիզկուլտուրա | 20 | 13 | 8 | 8.9 | 8.9 | 8.8 | | | |
| Աշխարհագրութ./Ես և շրջակա/ | 20 | 13 | 8 | 7.6 | 7 | 6.3 | | | |
| Հասարակագիտ. | | 13 | 8 | | 7.3 | 7 | | | |
| Ինֆորմ | | 13 | 8 | | 7 | 6.6 | | | |
| Եկ. Պատմ. | | 13 | 8 | | 7.5 | | | | |
| Ընդամենը | 20 | 13 | 8 | | | | | | |

2023-2024 և 2024-2025 ուսումնական տարիների տարեկան միջին գնահատականների համեմատությունը ըստ հիմնական առարկաների՝ փաստում են, որ ըստ կրթական աստիճանների գնահատականները հիմնականում պահպանվել են, տատանումը տեղի է ունենում առավելագույնը 2% փոփոխությամբ:

Քանի որ դեռևս չունենք 2024-2025 ուումնական տարվա քննությունների արդյունքները, ուստի վերլուծությունը կատարվել է նախորդ երկու տարիների ցուցանիշներով: /Տվյալները ամրագրված են Դպրոցի տնօրենի տեղակալի հաշվետվությունում/:

**Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում ավարտական, պետական ավարտական քննությունների արդյունքների դինամիկայի վերաբերյալ՝**

| Քննական առարկաներ | Քննությունների միջին միավորների փոփոխությունը՝ ըստ կրթական աստիճանների 2023-2024 ուստարի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քննությունների միջին միավորների աճի տոկոսը % | | | Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը % | | |
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ.դաս. |
| Հայոց լեզու | | 10 | | | | 5 |
| Մաթեմատիկա | | 5.07 | | 1,35 | | 1.5 |
| գրականություն | | 4.3 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մայրենի | | | | 2.6 | | |
| Հայոց պատմություն | | 5 | - | | | - |
| Օտար լեզու | | 6.7 | | | | |
| Ռ. լեզու | | | | | 3.9 | |
| ֆիզիկա | | | | | | |
| աշխարհագրություն | | | | | 7.6 | |
| կենսաբանություն | | 36.3 | | | | |
| ֆիզկուլտուրա | | | | | | - |
| ընդամենը | | | | | | |

Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ երկու ուստարիներում 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման արդյունքների ցուցանիշների նվազում, իսկ 9-րդ դասարանում նվազումը նկատվել է բնագիտական և օտար լեզուների բնագավառում, 12-րդ դասարանում՝ հայոց լեզուն և մաթեմատիկա առարկաներից: /Տվյալները ամրագրված են Դպրոցի ներքին գնահատման մեջ /:

**Գրավոր աշխատանքների վերլուծությունը 2024-2025 ուստարում**

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ՆԴՎ-ով սահմանված՝ քննական, կրթական մի աստիճանից հաջորդ կրթական աստիճան փոխադրված, ինչպես նաև այն դասարաններում, որտեղ ներդրվել է նոր չափորոշիչը, գրավոր աշխատանքների իրականացման արդյունքները ամփոփվել են տնօրենի տեղակալի և մեթոդական միավորումների հաշվետվությունների մեջ: Հաշվետվությունների արդյունքներից օտվելով ներկայացնում ենք գրավոր աշխատանքների արդյունքների համեմատական վերլուծությունը:

| Առարկան | դասարանը | Առաջ. 1-ին կիսամյակ | Որակը 1-ին կիսամյակ | Առաջ. 2-րդ կիսամյակ | Որակը 2-րդ կիսամյակ | Աճ/նվազում |
|---|---|---|---|---|---|---|
| Հ. լեզու | 8-րդ | 100% | 57% | 100% | 52.9% | -7.1% |
| Մայրենի | 5-րդ | 100% | 71% | 100% | 77% | +8.4% |
| Հ. լեզու | 7-րդ | 100% | 43% | 100% | 59% | +37.2% |
| Ռ. լեզու | 10-րդ | 100% | 100% | 100% | 100% | անփոփոխ |
| Հ. լեզու | 12-րդ | 86% | 42.8% | 100% | 50% | +16.8% |
| Մայրենի | 6-րդ | 100% | 64% | 100% | 75% | +17.1% |
| Քիմիա | 8-րդ | 100% | 40% | 100% | 60% | +50% |
| Մաթեմատիկա | 5-րդ | 100% | 57% | 100% | 69% | +21% |
| Հ. պատմություն | 9-րդ | 84.6% | 30.7% | 90.9% | 27% | -10% |
| Մայրենի | 4-րդ | 84% | 57% | 89% | 52% | -8.77% |
| Մաթեմատիկա | 6-րդ | 100% | 58% | 100% | 53% | -8.6% |
| Մայրենի | 2-րդ | | | - | - | - |
| Մաթեմատիկա | 2-րդ | | | - | - | |
| Մաթեմատիկա | 4-րդ | 85% | 65% | 90% | 65% | անփոփոխ |
| Մայրենի | 3-րդ | | | - | - | |
| Մաթեմատիկա | 3-րդ | | | - | - | |
| Հանրահաշիվ | 8-րդ | 100% | 38% | 100% | 47% | +23.6% |

Ցածր առաջադիմություն ունեն այն դասարանները, որտեղ ներդրված չէ նոր չափորոշիչը (4-րդ, 9-րդ, 12-րդ): Նոր չափորոշչային դասարաններում առաջադիմությունը բարձր է, քանի որ չկա անբավարար գնահատական:

1-ին և 2-րդ կիսամյակների գրավոր աշխատանքների որակական արդյունքները գրանցել են դրական

դինամիկա:

**Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ երկու տարիների համար: Օգտվել ենք emis.am համակարգի տարեկան գնահատման բաժնից և դասղեկների տարեկան հաշվետվություններից: Վերլուծության ցուցանիշները ներկայացված են աղյուսակում՝**

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի | | | 2023-2024 ուստարի | | | 2024-2025 ուստարի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **1-4 դաս** | **5-9 դաս.** | **10-12 դաս** | **1-4 դաս** | **5-9 դաս.** | **10-12 դաս** | **1-4 դաս** | **5-9 դաս** | **10-12 դաս** |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝(հաշվարկ. տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկան միջին գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 28 | 13 | 2 | 14 | 15 | 2 | 6 | 10 | 3 |
| | 45.9% | 17.5 % | 6.4% | 34.1 % | 19.2% | 8.6% | 30% | 12% | 15.7% |
| Ցածր առաջադիմությամբ Սովորողների թիվը և տոկոսը՝ ( հաշվարկ. տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան միջին գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 35 | 34 | 15 | 14 | 39 | 14 | 12 | 43 | 9 |
| | 24.5% | 45.9 % | 70.9% | 34.1 % | 50% | 60.8% | 60% | 54% | 47% |
| Ավարտման գործակից (հաշվարկ. տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում քննություններից դրական գնահատական ստացածների հարաբերությունը նույն դասարանների սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| Երկտարեցիների թիվը և տոկոսը (հաշվարկ. տվյալ կրթական աստիճանում երկտարեցիների թվի հարաբերությունը նույն կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | 0% | 0% | 0% | 4.1% | 0% | 0% | 0% | 0% | 0% |
| Կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% |
| Միասնական քննությունների մասնակիցների թիվը և տոկոսը շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ (հաշվարկ. 12-րդ դասարանի շրջանավարտներից միասնական քննություններին մասնակիցների թվի հարաբերությունը շրջանավրտների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) Լրացնել միայն 12-րդ դասարանի համար | | | 4 | | | 2 | | | 4 |
| | | | 25% | | | 28.5% | | | 50% |
| Ավարտական և միասնական քննություններին անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը շրջանավարտների ըդհանուր թվի նկատմամբ | | | 1 | | | 0 | | | |
| | | | 6.25 % | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը | | 6 | | | 6 | | | | |
| | | 42% | | | 60% | | | | |
| | | | | | | | | | |
| Հիմնական դ պրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում | - | 8 | | | 4 | | | | |
| | | 57.1% | | | 40% | | | | |
| Նախնական (արհեստագործական) և Միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և տոկոսը | | | 2 | | | 1 | | | |
| | | | 12.5% | | | 14.2% | | | |
| ԲՈՒՀ-եր ընդունված Շրջանավարտների թիվը և տոկոսը շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ | | | 3 | | | 2 | | | - |
| | | | 18.7% | | | 28.5% | | | |

Սովորողների առաջադիմության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարրական դասարաններում նվազել է գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը, որը պայմանավորված է նրանով, որ նոր ՀՊՉ-ի ներդրմամբ 2-րդ և 3-րդ դասարանցիները չունեն միավորային գնահատում, գնահատվում են բնութագրման միջոցով: Հիմնական դպրոցում ևս նկատվում է նվազում մոտավոր 36%-ով, իսկ ավագ դպրոցում գերազանց առաջադիմությամբ սովորողների աճ է գրանցվել 80%-ով՝ պայմանավորված սովորողների մասնագիտական կողմնորոշման հստակեցմամբ: Ավելացել է նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվող սովորողների թիվը: 2023-2024 ուսումնական տարում Դպրոցն ունեցել է երկտարեց մեկ սովորող, ով այլ ուսումնական հաստատությունից տեղափոխվել է 200 և ավելի ժամ բացակայությամբ:

**Օգտվելով olimp.am կայքից, առարկայական օլիմպիադաների կազմկոմիտեի արձանագրություններից և մեթոդական միավորումների հաշվետվություններից՝ ներկայացնում ենք տվյալներ առարկայական օլիմպիադաներին և սպորտային, երաժշտական, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ՝**

| Ցուցանիշ | 2022-2023 Ուստարի | 2023-2024 Ուստարի | 2024-2025 Ուստարի |
|---|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը (հաշվարկ.հաստատությունից մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թվի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 2<br>1.05% | 2<br>1.14% | 2<br>1.15% |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0 | 0 | 0 |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | 0 | 0 | 0 |
| Մարզային և հանրապետական սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը | 21<br>11.1% | 12<br>6.89% | 15<br>8.6% |
| Միջազգային սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթներին մրցանակների ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0 | 0 | 0 |

Սովորողների մասնակցությունն օլիմպիադաներին ակտիվ է, սակայն պետք է արձանագրենք, որ սովորողները մասնակցում են միայն օլիմպիադաների դպրոցական և մարզային փուլերին: Օլիմպիադաների մարզային փուլում մրցանակների արժանացած և հանրապետական փուլին մասնակից սովորողներ չկան, քանի որ սովորողների մոտ առկա է մոտիվացիայի պակաս, իսկ ուսուցիչները չեն խրախուսում և աջակցում սովորողներին:

**Տվյալներ վերջին երկու ուստարիներին դպրոցում գործող խմբակների վերաբերյալ**

Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների վերլուծության կարևորագույն բաղադրիչ են կազմում դպրոցում գործող խմբակները, նախազծային ուսուցումը, երկարօրյա ուսուցումը:

**Տվյալների վերլուծության համար օգտվել ենք ԴԿՏ համակարգի համապատասխան բաժիններից, տնօրենի տեղակալի, ԴԱԿ-ի, խմբակների ղեկավարների հաշվետվություններից:**

| 2023-2024 ուսումնական տարում Դպրոցում իրականացված խմբակները | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/հ | Խմբակի անվանումը | Դասարանը | Շաբաթ. ժամերի քանակը | Խմբակում ընդգրկված անդամների թիվը |
| 1 | «Հմուտ ձեռքեր» | 7-րդ | 1 | 8 |
| 2 | «Հայոց Մեծ եղեռն» | 11-12-րդ | 2 | 9 |
| 3 | «Նորարար ջերմատուն» | 8-9-րդ | 2 | 12 |
| 4 | «Ազգագրություն» | 5-րդ | 2 | 11 |
| 5 | «Աշխարհագետի ակումբ» | 7-րդ | 2 | 9 |
| 6 | «Մայրենի» | 2-րդ | 2 | 22 |
| 7 | Առողջ ապրելակերպ | 5-րդ | 1 | 19 |
| 8 | Առողջ ապրելակերպ | 7-րդ | 1 | 17 |

| 2024-2025 ուսումնական տարում Դպրոցում իրականացված խմբակները | | | | |
|---|---|---|---|---|
| N | Խմբակի անվանումը | Դասարան | Շաբաթ. ժամերի քանակը | Սովորողների թիվը |
| 1 | Աշխարհագետի ակումբ | 7 | 2 | 12 |
| 2 | Առողջ ապրելակերպ | 5 | 1 /1-ին կիսամյակ/ | 14 |
| 3 | Առողջ ապրելակերպ | 6 | 1 /2-րդ կիսամյակ/ | 17 |
| 4 | Առողջ ապրելակերպ | 8 | 1 /2-րդ կիսամյակ/ | 17 |
| 5 | Առողջ ապրելակերպ | 10 | 1 /2-րդ կիսամյալ/ | 4 |
| 6 | Առողջ ապրելակերպ | 7 | 1 /1-ին կիսամյակ/ | 17 |
| 7 | Ընթերցանություն և ասմունք | 5 | 1 | 11 |
| 8 | Կերպարվեստի պատմություն /գույների շխարհ/ | 3 | 2 | 13 |
| 9 | Հայագիտություն | 6 | 2 | 13 |
| 10 | Մանկական գրականություն | 2 | 1 | 12 |
| 11 | Մասնագիտական կողմնորոշում | 8 | 1 | 17 |
| 12 | Մասնագիտական կողմնորոշում | 10 | 1 | 4 |
| 13 | Նորարար ջերմատուն | 8 | 2 | 14 |
| 14 | Քաղաքացիական մասնակցության ակումբ | 10-11 | 2 | 11 |
| 15 | «Աթլետիկայի պատմության և տարբեր վազքաձևերի ուսուցում» | 4 | 2 | 17 |

2023-2024 ուսումնական տարում դպրոցում գործել է 8 խմբակ, իսկ 2024-2025 ուսումնական տարում խմբակների քանակը աճել է՝ դառնալով 15:

Դպրոցում գործող պարտադիր և ընտրովի խմբակներին տրված ժամաքանակը գործածվում է նպատակային և արդյունավետ: Խմբակների ընտրությունը իրականացվում է սովորողների հետաքրքրության և նախասիրությունների, ինչպես նաև դպրոցի կարիքներից ելնելով: /

**Տվյալներ դպրոցում գործող նախագծային աշխատանքների վերաբերյալ տվյալ և նախորդ ուստարիների համար՝**

| 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական նախագծային աշխատանքների թեմաները, առարկան, դասարանն ու ժամանակացույցը: | | | | |
|---|---|---|---|---|
| **N** | **Նախագծային աշխատանքի անվանումը** | **Առարկա** | **Դասարանը/ սովորողների թիվը** | **ժամանակացույց** |
| 1 | Մարդու ներգրավվածությունը բնության և շրջակա աշխարհում տարբեր ժամանակաշրջաններում | Հասարակագիտություն | 7-րդ/7 | 17.10-21.11.2023 |
| 2 | Ճանաչենք մեր նախնիների կատարած գործերը | միջառարկայական/գրականություն և հայոց պատմություն/ | 7-րդ/10 | 09.10-17.11.2023 |
| 3 | Երկրի մակերևույթի վրա մարդածին ազդեցությամբ առաջացած փոփոխությունները | Աշխարհագրություն | 7-րդ/14 | 06.11-07.12.2023 |
| 4 | Բնական պայմաններ և ռեսուրսներ. Սևանա լճի հիմնախնդիրները | Վերառարկայական /Աշխարհագրություն, կենսաբանություն/ | 7-րդ/12 | 11.01-07.03.2024 |
| 5 | Մարդ և իրավունք | Հասարակագիտություն | 7-րդ/17 | 15.03-19.04.2024 |
| 6 | Ռուսերենը մեր կյանքում | Ռուսաց լեզու | 7-րդ/10 | 21.04-20.05.2024 |

| 2024-2025 ուսումնական տարվա ուսումնական նախագծային աշխատանքների թեմաները, առարկան, դասարանն ու ժամանակացույցը: | | | | |
|---|---|---|---|---|
| **N** | **Նախագծային աշխատանքի անվանումը** | **Առարկա** | **Դասարան/ սովորող. թիվը** | **ժամանակացույցը** |
| 1 | Գոյականների քերականական հատկանիշները | Հայոց լեզու | 7-րդ/6 | 04.09-16.10.2024 |
| 2 | Եղանակ և կլիմա | Աշխարհագրություն | 7-րդ/12 | 30.10.-18.12.2024 |
| 3 | Հայերենի զարգացման փուլերը | Հայոց լեզու | 10-րդ/4 | 03.09.-15.10.2024 |
| 4 | Հելլենիզմը Հայաստանում | Հայոց պատմություն | 10-րդ/4 | 04.09-16.10.2024 |
| 5 | Նմանարկումը և մոդելավորումը բնագիտության մեջ | Բնագիտություն | 10-րդ/4 | 03.09.-17.12.2024 |
| 6 | Պոեմի տեսակները | Գրականություն | 8-րդ/7 | 04.09.-18.12.2024 |
| 7 | Ջուգահեռները բրիտանական և հայ գրականության մեջ 19-րդ դարի երկրորդ կեսին | Անգլերեն | 10-րդ/4 | 09.01-06.03.2025 |
| 8 | Արհեստական բանականություն | ԹԳՀԳ | 10-րդ/4 | 11.03-20.05.2025 |
| 9 | Հայաստանը և հայերը աշխարհում | Աշխարհագրություն | 8-րդ/10 | 17.02-07.04.2025 |
| 10 | Ճանապարհորդություն մեր երկրի պատմության էջերով | Ռուսաց լեզու | 7-րդ/8 | 12.03-21.05.2025 |
| 11 | Մաթեմատիկան առօրյայում | Հանրահաշիվ | 7-րդ/12 | 09.01-06.03.2025 |
| 12 | Մեղուների դերը կենսաբազմազանության պահպանման | Բնագիտություն | 10-րդ/4 | 03.03-19.05.2025 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գործում | | | |
| 13 | Շուկաների առաջացումը և փոփոխությունը մարդկության պատմության ընթացքում | Հասարակագիտ-ություն | 10-րդ/3 | 08.01-12.03.2025 |
| 14 | Ջուրը բնության մեջ | Քիմիա | 8-րդ/11 | 08.01-12.02.2025 |
| 15 | Գնդակի փոխանցում և ընդունում 2 ձեռքով /վոլեյբոլ/ | Ֆիզկուլտուրա | 8-րդ/12 | 14.04-19.05.2025 |

Նախագծային աշխատանքները նախատեսված են չափորոշչային դասարաններում /7-րդ դասարանից սկսած/ անհատական բաղադրիչի ժամաքանակից: 2023-2024 ուստարում նախագծային աշխատանքներ են իրականացվել 7-րդ դասարանում, իսկ 2024-2025 ուստարում՝ 7-8-րդ և 10-րդ դասարաններում: Սակայն մինչև նոր չափորոշչի ներդրումը Դպրոցում իրականացվել են երկարաժամկետ նախագծային այլ աշխատանքներ՝ «Դպրոցական մինի այգի», «Այբապատում», «Իմ կյանքը համայնքում:

**Տվյալներ դպրոցում գործող երկարօրյա խմբակների աշխատանքների վերաբերյալ նախորդ և տվյալ ուստարիների համար՝**

| **2023-2024 ուսումնական տարում իրականացված երկարօրյա ուսուցման կազմակերպման մասին տեղեկատվություն** | | | |
|---|---|---|---|
| **Առարկա** | **Դասարան** | **Աշակերտների քանակը** | **Ժամաքանակ** |
| Ռ․ լեզու | 2-րդ | 3 | 6 |
| Մաթեմատիկա | 2-րդ | 4 | 8 |
| Մաթեմատիկա | 5-րդ | 4 | 6 |
| Մայրենի | 5-րդ | 4 | 5 |
| Մաթեմատիկա | 7-րդ | 3 | 6 |
| Կենսաբանություն | 7-րդ | 3 | 6 |
| **2024-2025 ուսումնական տարում իրականացված եևրկարօրյա ուսուցման կազմակերպման մասին տեղեկատվություն** | | | |
| **Առարկա** | **Դասարան** | **Աշակերտների քանակը** | **Ժամաքանակ** |
| Մայրենի | 2-րդ | 4 | 6 |
| Մայրենի | 2-րդ | 3 | 12 |
| Ռ․լեզու | 2-րդ | 2 | 8 |
| Մաթեմատիկա | 2-րդ | 2 | 12 |
| Մաթեմատիկա | 5-րդ | 3 | 6 |
| Մաթեմատիկա | 6-րդ | 4 | 9 |
| Հայոց լեզու | 7-րդ | 2 | 9 |
| Հայոց լեզու | 7-րդ | 2 | 12 |
| Մաթեմատիկա | 7-րդ | 2 | 9 |

Երկարօրյա ուսուցումը դպրոցում իրականացվել է կրթական երկու աստիճաններում՝ տարրական և հիմնական /չափորոշչային դասարաններում/: 2023-2024 ուստարում երկարօրյա ուսուցում իրականացվել է 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում, 2024-2025 ուստարում՝ 2-3-րդ, 5-6-7-րդ դասարաններում: Երկարօրյա ուսուցումը իրականացվել է ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար:

Նկատելի է, որ 2023-2024 ուսումնական տարում երկարօրյա խմբակում ընդգրկված սովորողները հաղթահարել են ուսումնական դժվարությունը և 2024-2025 ուստարում այլևս չեն ընդգրկվել երկարօրյա խմբակում:




**Տվյալներ «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագրի վերաբերյալ նախորդ և տվյալ ուստարիների համար**

Տվյալների վերլուծության նպատակով օգտվել ենք տարրական դպրոցի դասվարների և «Տարրական» մեթոդական միավորման ղեկավարի հաշվետվություններից:

2023-2024 ուսումնական տարի.

| Դասարանը | Սովորողների թիվը | Ընթերցանության արագություն | | | Ընթերցանության սահունություն | | | Ընթերցանության ճշգրտություն | | | Ընթերցանության ընկալում | | | Ընթերցանության արտահայտչականու-թյուն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մակարդակ | | | Մակարդակ | | | Մակարդակ | | | Մակարդակ | | | Մակարդակ | | |
| | | ա | բ | գ | ա | բ | գ | ա | բ | գ | ա | բ | գ | ա | բ | գ |
| 2-րդ | 22 | 3 | 12 | 7 | 4 | 11 | 7 | 4 | 12 | 6 | 1 | 3 | 18 | 2 | 6 | 14 |
| 3-րդ | 23 | 5 | 8 | 10 | 5 | 8 | 10 | 5 | 8 | 10 | 0 | 15 | 8 | 5 | 13 | 5 |
| 4-րդ | 17 | 2 | 5 | 10 | 4 | 6 | 7 | 7 | 7 | 3 | 9 | 6 | 2 | 8 | 7 | 2 |
| Ընդ. | 62 | 10 | 25 | 27 | 13 | 25 | 24 | 16 | 27 | 19 | 10 | 24 | 28 | 15 | 26 | 21 |

2024-2025 ուսումնական տարի.

| Դասարանը | Սովորողների թիվը | Ընթերցանության արագություն | | | Ընթերցանության սահունություն | | | Ընթերցանության ճշգրտություն | | | Ընթերցանության ընկալում | | | Ընթերցանության արտահայտչականու-թյուն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մակարդակ | | | Մակարդակ | | | Մակարդակ | | | Մակարդակ | | | Մակարդակ | | |
| | | ա | բ | գ | ա | բ | գ | Ա | բ | գ | ա | բ | գ | ա | բ | գ |
| 2-րդ | 12 | 4 | 3 | 5 | 4 | 4 | 4 | 4 | 3 | 5 | 3 | 9 | - | 4 | 3 | 5 |
| 3-րդ | 21 | 3 | 10 | 8 | 4 | 8 | 9 | 10 | 8 | 3 | 21 | - | - | 9 | 12 | - |
| 4-րդ | 20 | 6 | 3 | 11 | 6 | 5 | 9 | 7 | 4 | 8 | 10 | 10 | - | 8 | 8 | 4 |
| Ընդ. | 53 | 13 | 16 | 24 | 16 | 17 | 22 | 21 | 15 | 16 | 34 | 19 | - | 21 | 23 | 9 |

Ընթերցանությունը իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից տրամադրված ստուգաթերթին և ընթացակարգին համապատասխան: Վերլուծությունից պարզ դարձավ, որ ընթերցանության բաղադրիչների արդյունքները ըստ մակարդակների տարբեր են, սակայն 100% առաջադիմություն է նկատվում ընթերցանության ընկալման բաժնում:

Դրական դինամիկա է նկատվել ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրության հանդեպ: Սովորողները մասնակցել են «Կորիզ» հիմնադրամի կողմից անցկացված «Իմ ընկեր Ալենը» ընթերցանության մրցույթին և պարգևատրվել պատվոգրերով:

**Տվյալներ դպրոցում գործող ներառական կրթության իրականացման աշխատանքների վերաբերյալ նախորդ և տվյալ ուստարիների համար:**

ԿԱՊԿՈՒ սովորողների մասին տեղեկատվության վերլուծության նպատակով տվյալներ ենք վերցրել դպրոցի տնօրենի, տնօրենի տեղակալի և ԱՈՒՊ-ը մշակող խմբի անդամների տարեկան հաշվետվությունների արդյունքներից, որոնք ներկայացված է աղյուսակում՝

| Ուսումնական տարի | ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը | Դասարանը | Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության մակարդակը/աստիճանն | Արձանագրված կայուն դժվարությունների ոլորտը/ֆունկցիաները |
|---|---|---|---|---|
| 2021թ.-2022թ. | 3 | 7-րդ | թեթև | Ինտելեկտուալ (մտավոր) |
| | | 2-րդ | թեթև,<br>միջին | Ձայնի և խոսքի,<br>Ինտելեկտուալ (մտավոր) |
| | | 6-րդ | թեթև | Ձայնի և խոսքի ինտելեկտուալ (մտավոր) |
| 2022թ.-2023թ. | 2 | 3-րդ | թեթև,<br>միջին | Ձայնի և խոսքի ինտելեկտուալ (մտավոր) |
| | | 8-րդ | թեթև | ինտելեկտուալ (մտավոր), |
| 2024թ.-2025թ. | 4 | նախակրթարան | 3-րդ աստիճան | Ձայնի և խոսքի,<br>ինտելեկտի(մտավոր) |
| | | 2-րդ | 1-ին աստիճան | Խոսքի և լեզվի |
| | | 2-րդ | 2-րդ աստիճան | Ինտելեկտի (մտավոր) |
| | | 4-րդ | 1-ին աստիճան | ինտելեկտի(մտավոր),<br>հուզական |

Դպրոցը դեռևս 2021 թվականից համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ, ծնողների դիմումների համաձայն իրականացվել է դպրոցական մակարդակի գնահատում /2021-2022 ուստարում/, այնուհետև՝ տարածքային մակարդակի գնահատում: Դպրոց-ՏՄԱԿ համագործակցության կարևոր օղակ է համարվում առանձնահատկություններ ունեցող սովորողի ծնողը, ով երբեմն խուսափում է համագործակցությունից;

**Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ▪ Դպրոցը չունի երկկոմպլեկտ և եռակոմպլեկտ դասարաններ | ▪ Դասարաններում սովորողների թվաքանակը քիչ է: |
| ▪ Դպրոցում չկան կրթությունից դուրս մնացած սովորողներ և երկտարեցներ | ▪ Ավագ դպրոց տեղափոխված սովորողների քանակի նվազումը |
| ▪ Գրանցվել է սովորողների առաջադիմության դրական դինամիկա | Առարկայական օլիմպիադաներում հաջողությունների պակաս |
| ▪ Կենգուրու, մեղու, ռուսական արջուկ, կորիզ մրցույթների մասնակցություն և | ▪ Մասնակիցների թվի նվազում |

| | |
|---|---|
| հաջողությունների գրանցում | |
| ▪ Մարզական միջոցառումների և մրցույթների մասնակցություն, հաջողությունների գրանցում | ▪ |
| ▪ Չափորոշչային դասարաններում նախագծային և երկարօրյա /ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար/ ուսուցման իրականացում | ▪ Ծնողի դիմումի համաձայն երկարօրյա ուսուցման բացակայություն |
| ▪ Արտադասարանական պարտադիր և ընտրովի խմբակների գործունեություն | ▪ Սովորողների շաբաթական ծանրաբեռնվածությունը դժվարեցնում է սովորողների՝ խմբակների մասնակցությունը |
| ▪ Դպրոց է ներդրվել համընդհանուր ներառման համակարգը․ համգործակցությունը ՏՄԱԿ-ի հետ արդյունավետ է | ▪ Ռեսուրս-սենյակի բացակայություն, դիդակտիկ պարագաների պակաս: |
| ▪ Ընթերցանությունը դպրոցում դրված է լավ հիմքերի վրա | |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցն ունի մանկավարժական կազմ, որն ունակ է ապահովելու արդյունավետ ուսուցման գործընթացի կազմակերպումը: Դպրոցում մանկավարժների թիվն 29 է: Միջին մասնագիտական կրթությամբ երկու մանկավարժ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, որի արդյունքում շարունակում են աշխատել դպրոցում:

Դպրոցում կամավոր ատեստավորմանը մինչ օրս մասնակցել են հինգ մանկավարժներ՝ տարրական դասարանի դասվար, անգլերեն, հայոց լեզու, երաժշտություն և ֆիզկուլտուրա առարկաների ուսուցիչներ, ովքեր հավաքել են բարձր միավորներ:

Դպրոցում տարակարգ ունեցող երեք մանկավարժ է աշխատում, իսկ որպես վերապատրաստող մենթոր՝ մեկ մանկավարժ: Մանկավարժները մասնակցում են պարտադիր վերապատրաստումներին և ատեստավորումներին: Վերջին երեք տարիների ընթացքում պարտադիր ատեստավորումն անցել են բոլոր մանկավարժները, բառացությամբ երկուսի: 2025 թվականին հերթական ատեստավորում է անցնելու մեկ ուսուցիչ, ով վերադարձել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդից: Բոլոր մանկավարժները մասնակցել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված վերապատրաստումների:

Դպրոցում կան հետազոտական աշխատանքներ իրականացնող մանկավարժներ. մանկավարժ Ռոզա Հակոբյանը մասնակցել է դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի կողմից «Դասագրքաստեղծման աշխատանքներում ուսուցիչների մասնակցության» ծրագրի շրջանակներում իրականացված մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացին և արժանացել փորձագիտական խմբի հավանությանը, դպրոցի

աշխարհագրության, հասարակագիտության և պատմության ուսուցիչների համատեղ նախագծային աշխատանքի արդյունքում դպրոցը համագործակցել է «Աշխարհացույց» հարթակի հայտարարած <<Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին>> ծրագրին և շահել սմարթ-էկրան, իսկ ուսուցիչներից մեկը ստացել է հավաստագիր:

Դպրոցում աշխատում են տարակարգ և «Տարվա լավագույններ» կոչումներ ստացած աշխատակիցներ՝ ֆիզիկայի ուսուցիչ Նելլի Դոնոյանը /2020 թ. 2021թ /, մաթեմատիկայի ուսուցիչ Աշոտ Խաչատրյանը/ 2021թ./, Հայկանուշ Հակոբյանը, ով նոր է համալրել դպրոցի մանկավաժական կազմը, ունի 4-րդ աստիճանի տարակարգ:

Դպրոցի մաթեմատիկայի առարկայի ուսուցչի թափուր տեղի մրցույթին մասնակցել է Խ. Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական համալսարանի վերջին կուրսի ուսանող Սիրուն Մարկոսյանը և համալրել թափուր հաստիքը:

Դպրոցի տնօրեն Նելլի Հակոբյանը մասնակցել է տարվա լավագույնները մրցույթին, իսկ 2024 թվականին՝ «Ամսվա լավագույններ» մրցույթին և  արժանացել հաղթողի կոչմանը՝ «Ամսվա լավագույն տնօրեն» անվանակարգում:

Մանկավարժական աշխատողներից երկուսը մասնակցում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ասոցացված դպրոցների կողմից կազմակերպված դասընթացներին:

Ունենք մեկ մանկավարժ, ով աշխատանքին զուգահեռ սովորում է ԲՈՒՀ-ում՝ մանկավարժական ֆակուլտետում:

Դպրոցի գրադարանավարը 2022-2023 ուստարում մասնակցել է «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» միջազգային գիտաժողովին «Գրագիտություն և ընթերցանություն» թեմայով զեկուցմամբ, 2024թ.՝ «Մասնագիտական զարգացումը աշխատավայրից ներս» թեմայով զեկուցմամբ: Զեկույցները լույս են տեսել  «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսներում:

Դպրոցի ուսուցչի օգնականները մասնակցել են ՏՄԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին, աջակցում են ԿԱՊԿՈՒ սովորողներին անհրաժեշտ ծառայությունների մատուցումը, միաժամանակ օգնում են մանկավարժներին:

**Տվյալներ ուսուցչական կազմի և նրանց գործունեության վերաբերյալ տվյալների վերլուծության նպատակով օտվել ենք Դպրոցի ներքին գնահատումից և emis.am համակարգից:**

| Ցուցանիշը | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի | Փոփոխությու և ների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 25 | 24 | 25 | Աճ 4.1% |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածութ յունը | 19.2 | 19,2 | 14.76 | Նվազում 23.1% |

| Ուսուցիչների թիվը | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 3 | 3 | 2 | նվազում |
| 31-ից 40 տարեկան | 8 | 11 | 1 | Աճ,նվազում |
| 41ից 50 տարեկան | 4 | 6 | 8 | աճ |
| 51-ից 55 տարեկան | 1 | 1 | 7 | աճ |
| 56 տարեկան և ավելի | 9 | 3 | 7 | Նվազում/աճ |

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|
| Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | **24**<br>**96%** | 24<br>96% | 23<br>92 % |
| Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը | **25**<br>100% | **25**<br>100% | **25**<br>100% |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | **2**<br>8% | **2**<br>8% | **3**<br>12 % |
| Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը | **0** | **2**<br>8% | **5**<br>20% |
| Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | **0** | **0** | **0** |
| ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում Վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը | 12 | 24<br>96% | 23<br>*92*% |
| Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և % | 1<br>4% | 1<br>4% | 1<br>4% |
| Ուսուցիչների միջին տարիքը (հաշարկ. Հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին) | 50.68 | 50.04 | 50.52 |
| Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և % | 20<br>80% | 23<br>92% | 23<br>92% |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը | 25<br>100% | 25<br>100% | 25<br>100% |
| Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը և տոկոսը | 13<br>51% | 18<br>75% | 20<br>80 % |
| Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվը | 205 | 141 | 206 |
| ՀՀ ԿԳՆ, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ և Մայր Աթոռի հետ համատեղ կողմից անցկացվող մրցույթներին մասնակցած ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 | 5<br>20% | 1<br>4% |
| ՀՀ ԿԳՆ, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ և Մայր Աթոռի հետ համատեղ անցկացվող մրցույթներին մրցանակներ ստացած ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 | 4<br>16% | 1<br>4% |
| Ուստարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալումների թիվը | 96 | 107 | 108 |
| Ուստարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը | 24 | 10 | 12 |

Դպրոցի ուսուցիչներից երկուսը ունեն միջին մասնագիտական կրթություն, սակայն աշխատում են իրենց մասնագիտությամբ, քանի որ մասնակցել են կամավոր ատեստավորմանը և հաղթահարել անցողիկ շեմը: Դպրոցն ունի համատեղությամբ աշխատող երկու ուսուցիչ: Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 70%-ով, իսկ տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը՝ 50%-ով: Նշված ուսուցիչներից մեկը ուսումը շարունակում է բարձրագույն ուսումնական հաստատությունում:

| Տվյալներ հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ: | | | |
|---|---|---|---|
| **Անունը, ազգանունը,** | **Պաշտոնը** | **Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը** | **Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը տարիներով** |
| Նելլի Հակոբյան | Տնօրենի | 2020-2025 | 24 |
| Լուսինե Գրիգորյան | Տնօրենի տեղակալ | 2020-2025 | 29 |

| Տվյալներ հաստատության ընդհանուր աշխատակիցների մասին | | |
|---|---|---|
| Աշխատանքի ոլորտը | թիվը | Ընդհանուր աշխատակիցների հետ համեմատած միջին վիճակագրակն տարիքը |
| Ընդհանուր աշխատողներ | 41 | |
| Վարչական աշխատողներ | 2 | 48.5 |
| Մանկավարժական աշխատողներ | 29 | 48,34 |
| ուսուցիչ | 25 | 50,52 |
| նախակրթարան | 2 | 31,5 |

## Մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների, զարգացման կարիքների, ինքնակրթության արդյունավետության ուժեղ և թույլ կողմերը՝

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ▪ Վերապատրաստումներ անցած տնօրեն, տնօրենի տեղակալ | ▪ Վարչական աշխատողներին իրենց մասնագիտությամբ ուսուցչական գործունեության սահմանափակում |
| • Վերջին տարիներին գրանցվել է կամավոր և պարտադիր ատեստավորում անցած մանկավարժական աշխատողների քանակի աճ: | • Կամավոր ատեստավորման մասնակցությունից խուսափում |
| ▪ Հանրակրթության նոր չափորոշչի կիրառում | ▪ ՀՊՉ-ի ներդրմանն ուղղված ընթացիկ վերապատրաստումների, դասընթացների պակաս |
| ▪ ՆԴՎ-ով սահմանված դասալսումների իրականացում | ▪ Փոխադարձ դասալսումներ թերի իրականացում |
| ▪ ՏՀՏ գործիքների կիրառում դասապրոցեսներին | ▪ ՏՀՏ գործիքներով թերբեռնված դասասենյակներ |
| ▪ Բնագիտական առարկաների որակավորում ունեցող ուսուցիչներ | ▪ Լաբորանտի որակավորում ունեցող մասնագետի պակաս |
| ▪ Վերապատրաստում անցած գրադրանավար. Գրադարան-սպորտ համագործակցություն | ▪ |
| ▪ Ինֆորմատիկայի որակավորում ունեցող ուսուցիչ | ▪ ԹԳՀԳ առարկայի ուսուցչի մասնագիտական գիտելիքներով վերազինման պակաս |
| ▪ Մանկավարժների համագործակցությունը ՏՄԱԿ-ի հետ | ▪ Համագործակցության նախաձեռնողականության պակաս |
| ▪ Ուսուցչի օգնականների արդյունավետ համագործակցություն մանկավարժների հետ | ▪ Դպրոցի ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքին համպատասխան վերապատրաստման պակաս |
| ▪ ՆԶՊ առարկայի համպատասխան որակավորում ունեցող մասնագետ | ▪ Գործնական պարապմունքների անցկացման դժվարություններ. համապատասխան տարածքի բացակայություն և ուսումնատեխնիկական միջոցների պակաս |
| ▪ ԴԱԿ-ի արդյունավետ աշխատանք | ▪ ՄԿԱ աշխատակցի բացակայության պատճառով համապատասխան պարտականությունների լրացուցիչ ծանրաբեռնվածություն |
| ▪ Որոշ մանկավարժներ մասնակցել են | ▪ Մանկավարժների նախաձեռնությամբ |

| | |
|---|---|
| տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները ուսումնական հաստատությունում, բուլլինգի դեմ պայքարի կարևորությունը, գնահատման տարբեր գործիքների կիրառությունը և այլ թեմաներով վերապատրաստումների: | վերապատրաստումներին մասնակցությունը ցածր է, |
| ▪ Պարբերաբար դպրոց են հրավիրվել տարբեր կազմակերպություններ՝ edu. Armenia, «Աշխարհացույց» կրթական հարթակ, մանկավարժների ուսումնամեթոդական կարողությունները զարգացնելու նպատակով | |

## ՀԱՄԱՅՆՔԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ: ԴՊՐՈՑԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ուսումնական հաստատությունը պահպանում է կրթության կառավարման մարմինների կողմից ընդունած իրավական ակտերի պահանջները, լիարժեք համագործակցում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, համայնքի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ: Դպրոցը կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման մեջ բոլոր համագործակցության ոլորտներում կրում է պատասխանատվություն, փոխադարձ վստահություն և համագործակցություն:

Այս համագործակցությունը կարելի է նմանացնել բնության մեջ իրականացվող ջրի շրջապտույտին կամ տնտեսության մեջ՝ շրջանաձև տնտեսությանը, որի դեպքում մեկը մյուսին լրացնում է, և միմյանց հետ փոխկապակցված են: Դրա վառ օրինակ է <<Հայաստանի դպրոցական լավագույն մինի այգի>> ծրագիրը, որի համագործակցող անդամներն են՝ ԿԳՄՍ նախարարություն, ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր, Ռուսաստանի ճյուղային սնունդի ինստիտուտ (SIFI) և <<Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն (ԴՍԵԲ)>> հիմնարկ, իրականացնողները՝ դպրոց, համայնք, սովորողներ: Վերջնարդյունքը այն է, որ, բացի համագործակցությունից, դպրոցը արժանացել է հաղթանակների և ստացել նյութական ու ֆինանսական աջակցություն, որը օգտագործել ենք այգում կաթիլային ոռոգման ներդրման նպատակով և գյուղատնտեսական գիտելիքների ու հմտությունների զարգացման համար: Համագործակցության հաջորդ օղակը << Իմ կյանքը համայնքում>> երեխաների փոխանակման ծրագիրն է, որի նախաձեռնողը ԿԶՆԱԿ հիմնադրամն է, իրագործողը՝ դպրոցը, իսկ հյուրընկալողը՝ համայնքը: Արդյունքում սովորողների մեջ ձևավորվում է հայրենաճանաչման, տեղանքի մշակույթի, պատմության, ավանդույթների ուսումնասիրում, երեխաների միջև սոցիալականացման, տարբեր մարզերում մշակութային կյանքի, ընդունված ավանդույթների հետ շփում:

<<Այբապատում>> ծրագիրը դպրոցում իրականացված առաջին նախագծային աշխատանքն էր դեռևս ՀՊՉ-ի ներդրումից առաջ: Այն փորձի փոխանակման լավագույն հնարավորություն է թե՛

սովորողների, և թե՛ մանկավարժների համար: Արդյունքում զարգացավ ծնողական համայնքի հետ դպրոցի համագործակցությունը, իսկ սովորողների մոտ՝ փոխշահավետ շփումն ու համագործակցային հմտությունները:

Շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունների մասին տեղեկատվությունը ամփոփված է դպրոցի տնօրենի, ԴԱԿ-ի, գրադարանավարի, տնօրենի տեղակալի հաշվետվություններում, ինչպես նաև խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրություններում:

- **Համագործակցությունների ոլորտներն ու նշանակալից ձեռքբերումները ցայտուն և թափանցիկ կերպով ներկայացված են ստորև՝**

| **Համայնքային, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունները** |
| --- |
| 1) ԿԳՄՍ<br>2) ԿԶՆԱԿ<br>3) ԿՏԱԿ<br>4) ԾԻԳ,<br>5) ՀՄԿ,<br>6) ՏՄԱԿ,<br>7) ԳԹԿ<br>8) «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի<br>9) ԱՅԲ հիմնադրամ<br>10) ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ<br>11) Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ<br>12) ՀՀ Գավառի ոստիկանություն ԱԳ և ԸԲԿԲ բաժանմունք<br>13) ՀՀ Գավառի ՆԳՆ վարչության ԱԻՆ ՓԾ<br>14) ՀՀ ԲՈՒՀ-եր<br>15) ՀՀ ՄՈՒՀ-եր<br>16) ՀՀ թատրոններ և թանգարաններ<br>17) Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմ<br>18) ՀՀ մարզեր և դպրոցներ<br>19) ՀՀ քաղաքային,մարզային և համայնքային գրադարաններ /Դպրոցի գրադարան՝ https://www.facebook.com/profile.php?id=100081040701452<br>20) «1+1» դպրոցական-մարզային թերթի խմբագրություն https://www.facebook.com/profile.php?id=100063716194215<br>21) ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիա<br>22) «ԷՅ-ԷԻ-ՓԻ» բնապահպանական ՀԿ<br>23) «Աժդահակ» սոցիալբնապահպանական ՀԿ https://www.facebook.com/ajdahakbkmail.ru<br>24) «Սևան ազգային պարկ»<br>25) «ՌԴ ճյուղային սնունդ» ինստիտուտ (SIFI),<br>26) ***ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ)***<br>27) «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի (SFCWA)<br>28) «Ջինիշյան» հիմնադրամ<br>29) Հանրային հեռուստաընկերություն<br>30) «Мир 24 Армения»<br>31) «Արմաթ» ինժեներական լաբորատորիա<br>32) «Գավառի երիտասարդական տուն»<br>33) IQ Center Global Education<br>34) և այլն: |

| **Համայնքային, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների համագործակցությունների ոլորտն ու նպատակները** |
| --- |
| • Սովորողների *ընթերցանության հմտությունները* խթանելու, գրքի հանդեպ հետաքրքրություն և սեր արթնացնելու նպատակով Դպրոցը համագործակցեց Հանրային հեռուստաընկերության և Գեղարքունիքի մարզպետարանի հետ. Արդյունքում դպրոցն ունեցավ վերանորոգված, վերազինված գրադարան և |

ընթերցասրահ, որի բացման հանդիսավոր արարողությանը դպրոցը հյուրընկալեց ՀՀ ԿԳՄՍ նախարար տիկին Ժաննա Անդրեասյանին և նրա շխատակազմին https://www.facebook.com/share/p/16nQpeS1qZ/ Հանրային հեռուստաընկերության հետ մշտական և շարունակական համագործակցության մեկ այլ դրսևորում է նաև այն, որ դպրոցի գրադարանը համալրվեց գրական և գեղարվեստական ստեղծագործությունների մեծ պաշարով՝ https://www.facebook.com/share/p/19hhoSdHhs/

- Սովորողների անհատական *գիտելիքների ու հմտությունների* զարգացման նպատակով ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությունները մշտական և շարունակական են, սակայն նշանակալից են այն փոխադարձ գործողությունները, որոնք նպատակային են: Այդպիսիք են՝ «Մաթեմարդ» / https://www.facebook.com/share/p/16Uv1Nr8eK/ , «Եկ՛ նախշուն զրույց անենք», «Շենացրու երկիրդ» https://www.facebook.com/share/v/1Xy5Q4vGfQ/ , «Սպորտային սերունդ» մրցույթները, «Կրթական էքսպո-2024», «Վարչապետի գավաթ» և այլ միջոցառումները:
- Կրթության զարգացումը և կրթական նորարարության դերը դպրոցական կյանքում շատ կարևոր է, որի նպատակով մշտապես մասնակից ենք դառնում նորանոր ծրագրերի՝ սովորողների *կրթական առօրյան առավել բազմազան, կարողություններով ու գիտելիքներով հագեցած* դարձնելու: Այդպիսիք են՝ «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագիրը, «Լավագույն դպրոցական մինի այգի» ամենամյա մրցույթը, «Պատմաբանի օր», «Մոլորակն ունի իմ ու քո կարիքը», «Ես եմ ռեժիսորը», «Մշակութային բազմազանություն», https://www.facebook.com/share/p/15WPz3PJfP/ «Արվեստի օր» / https://www.facebook.com/share/v/1Hw7tN3NCS/ նախագծերը և այլն:
- *Մանկավարժների մասնագիտական որակների բարելավման* և նոր չափորոշիչների կիրարկման լավագույն նախապայմանը վերազինված, վերապատրաստված լինելն է, որի նպատակով համագործակցային աշխատանքներ ենք իրականացնում տարբեր կազմակերպությունների հետ. ԹԻՉ գործիքակազմի մասին վերապատրաստումներ, պարզ ու թափանցիկ շփման, հետադարձ կապի հնարավորության շնորհիվ դպրոցը մշտապես համագործակցում է ԿՏԱԿ համակարգի տեղեկատվավերլուծական բաժնի հետ, https://emis.am/ համակարգի վարման հետ կապված աջակցություն է ստանում: Դպրոցի տնօրենը և տնօրենի տեղակալը https://emis.am/ համակարգին առավել ճկուն տիրապետելու նպատակով մասնակցել են դասընթացների:
- Դպրոցի տեղեկատվական, կրթական, ֆինանսական և տարատեսակ *կրթադաստիարակչական* ծրագրերի իրագործման նպատակով նպաստավոր է լիազոր մարմնի հետ համագործակցությունը: Դպրոցը մշտապես համագործակից է ու մասնակից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից կազմակերպված բազմաբնույթ միջոցառումներում: Այդպիսիք են՝ «Գեղարքունյաց ձմեռ» https://www.facebook.com/share/p/1C52kpHjov/ https://www.facebook.com/share/p/1AhPTxG766/ «Հայրենի եզերք» խորագրով բարբառների մարզային մրցույթ, «Սպորտլանդիա», «Փոհ փառատոն», «Երգի տոն» «Կանանց մեծարման ցերեկույթ», համապետական շաբաթօրյակ https://www.facebook.com/share/p/18sKHgzLfS/ «Մշակութային էքսպո» https://www.facebook.com/share/p/1DohMdVD23/ «Երիտասարդական մայրաքաղաք» https://www.facebook.com/share/p/15ErhhRSn9/ «Գավառը երիտասարդական քաղաք» միջոցառման մասնակից սաներն ու դպրոցը https://www.facebook.com/share/p/1C69Grc8Y8/ և այլն:
- Իրավապահ և ԱԻՆ ՓԾ մարմինները սովորողների համար *անվտանգ և իրավապես առողջ միջավայրի* ստեղծման լավագույն համագործակցողներն են, ովքեր իրազեկման, տեղեկատվական և տարատեսակ բացատրական աշխատանքներով աջակցում են սովորողներին՝ լինել գրագետ քաղաքացի: Կատարում են ուսումնական վարժանքներ՝ սովորողների գործնական գիտելիքների և հմտությունների բարձրացման նպատակով: ԱԳԲ տեսուչների հետ մշտապես կապի արդյունքում սովորողները ավելի զգոն են և իրազեկ: Նշենք մի քանիսը՝ «Խոսում է ոստիկանը», «Ճանապարհային երթևեկության կանոններ» https://www.facebook.com/share/p/1AHqajQzYB/ «Հեղեղումների ժամանակ, հեղեղումներից հետո վարքականոններ» թեմայով սեմինար https://www.facebook.com/share/p/18rMZAa2V8/ ուսումնական տարհանումներ՝ «Երկրաշարժ» և «Հրդեհ» https://www.facebook.com/share/p/1EA3cp5CUa/ թեմաներով և այլն:
- Նոր ժամանակի կրթության մարտահրավերներին և կրթական միջավայրում առաջացած դժվարությունների հաղթահարման փուլում դպրոցի կողքին են և անբաժան ընկեր ՀՄԿ-ն և ՏՄԱԿ-ը, որոնք աջակցում են *ԿԱՊԿՈՒ* սովորողների համար լավագույն պայմաններն ու միջավայրը ապահովելու գործում: Դպրոցն էլ իր հերթին առանձնահատուկ սովորողներին հիմնական և լրացուցիչ կրթություն է առաջարկում՝ օրինակ՝ «Երեխաների իրավունքների պաշտպանություն» թեմայով իրազեկում ԿԱՊԿՈՒ

սովորողների շրջանում https://www.facebook.com/share/p/1JGHxSppGF/,

- Լինելով հանրակրթական դպրոց և կրթության շրջապտույտի առաջին օղակ՝ հանձն ենք առել համագործակցել ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երի և ՄՈՒՀ-երի հետ՝ նպաստելու *սովորողների մասնագիտական կողմնորոշման, շարունակական կրթության կարևորությունը ընկալելու* համար: Մասնակցել ենք մի շարք ծրագրերի և համագործակցել տարբեր կրթական կառույցների հետ, այդ թվում՝ «Սովորեցնում ենք սովորել» ծրագրին, որի շրջանակում դպրոցը հյուրընկալեց ՀՊՄՀ-ին / https://www.facebook.com/share/v/16787xEZeE/
- *Ռազմահայրենասիրական* ոգու և կրթության իրազեկման նպատակով Վ. Սարգսյանի անվան ռազմամարզական ինստիտուտ https://www.facebook.com/share/p/16gsRE6bqC/ Գավառի Պետական համալսարան հաճախակի այցերը թույլ են տալիս մասնագիտական կողմնորոշման ճանապարհին լինել առավել շրջահայաց և նպատակասլաց https://www.facebook.com/share/p/1YzbEprk8D/ https://www.facebook.com/share/p/16XyN7Zq9d/
- Սովորողների մեջ *արժեհամակարգի ձևավորման* գործում կարևոր նախապայման է համագործակցել տարբեր մշակութային կառույցների և հիմնարկների հետ, կատարել տարատեսակ այցեր, շրջայցեր, էքսկուրսիաներ: Արվեստին և արհեստին մոտ գտնվել՝ նշանակում է հոգով և մտքով կիրթ լինել: Նշենք մի քանի կրթամշակութային այցելություններ՝ «Թանգարանային շաբաթ» ծրագրի շրջանակում այցելեցինք Հայաստանի պատմության թանգարան, դիտեցինք Անահիտ Աստվածուհու բրոնզաձույլ արձանը ՝ https://www.facebook.com/share/p/1DebUXe7RA/ Գավառի «Լ. Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի» շենքում տեղի ունեցավ «Կրթական էքսպո» 2024-ը https://www.facebook.com/share/p/1Bgxz4cbDK/ «Ավ. Իսահակյանի անվան տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը հյուրընկալվեց դպրոց և համագործակցության առաջարկով բաց դռների օր հայտարարեց դպրոցի սաների համար /սովորողների դերային խաղը արժանացել է լավագույն գնահատանքի https://www.facebook.com/share/v/19JjAxZPJk/ / https://www.facebook.com/share/p/16ApRg9FUk/ «Ժառանգության պահպանություն հանուն կայուն ապագայի» ծրագրի մասնակցությունը https://www.facebook.com/share/p/1EE2oqe1hX/
- Շատ են համագործակցությունները ՀՀ տարբեր մարզերի դպրոցների հետ, որը նպաստում է դպրոցում կրթության որակի և տարբեր մեթոդական հնարների ներդրմանը, միաժամանակ ստեղծում միջավայր միջանձնային հարաբերությունների և սովորողների *սոցիալականացման* մակարդակի բարձրացման համար: Համագործակցությունները դուրս են գալիս դպրոց-դպրոց, սովորող-սովորող, ուսուցիչ-ուսուցիչ շրջանակներից և վերածվում են ծնող-ծնող, համայնք-համայնք համագործակցության: Նմանատիպ միջոցառումների շարքին են դասվում «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման և https://www.facebook.com/share/p/1USRpMQfaq/ «Այբապատում» ծրագրերը https://www.facebook.com/watch/?v=2453646131488260 «Հեքիաթներ» գրքի ստեղծման շրջանակում՝ «Վանաձորի թիվ 21» դպրոցի և «Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի» հետ համագործակցություն https://www.facebook.com/share/p/1KyrdFH5SG/ «Իջևանի Մ. Մարտիրոսյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի» հետ մանկավարժական փորձի փոխանակում https://www.facebook.com/share/p/1C33EaWaU5/ ,
- *Ֆիզիկական դաստիարակության* կարևոր նախապայման է առողջ կենսակերպը, որի նպատակով հարկ է դպրոց ներդնել տարատեսակ սպորտային խմբակներ և միջոցառումներ, այդ նպատակով ընդլայնել համագործակցությունը հարակից կառույցների և դպրոցների հետ: Այդպիսի համագործակցություններ են սպորտային հանդիպումները Գեղարքունիքի մարզի տարբեր դպրոցների և Գավառի մարզադպրոցի հետ https://www.facebook.com/share/p/1GyySRXvy1/ https://www.facebook.com/share/v/1HRxMvxw72/, «Վարչապետի գավաթ» հեծանվավազքի ամենամյա մասնակցությունը https://www.facebook.com/share/r/1UABEcqXkP/ «Սպորտային սերունդ» մրցույթի մասնակցությունն ու գրանցած հաղթանակը https://www.facebook.com/share/p/16YCKqMZ9w/ https://www.facebook.com/share/p/14Ku8sQdCQW/
- *Բնապահպանական դաստիարակության,* գիտելիքների հարստացման նպատակով դպրոցը իրականացնում է մի շարք ծրագրեր և անհարժեշտության ու համագործակցության նպատակով փոխներգործուն հարաբերություններ է ստեղծում մի շարք կառույցների ու կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Սևան ազգային պարկ https://www.facebook.com/share/p/1AdNWnHkh2/, «Էյ-Թի-Փի» ՀԿ https://www.facebook.com/share/p/1Cy91Qnn6r/ https://www.facebook.com/share/v/19AbsNTRwZ/ «Աժդահակ» սոցիալ-բնապահպանական ՀԿ https://www.facebook.com/ajdahakbkmail.ru և այլն, մասնակցում ենք մի շարք բնապահպանական ծրագրերի ու մրցույթների, այդ թվում՝ «Բնության դեսպաններ» ծրագիրը, որի

շրջանակում մասնակցեցինք Երևանի բուսաբանական այգում տեղի ունեցած էքսպո-ցուցահանդեսին https://www.facebook.com/share/p/1DzdJK87zx/ «Բերքի տոն 10-ամյա» հոբելյանական փառատոնի մասնակցությունը https://www.facebook.com/share/p/15iaKbj2kq/ Դպրոցը իրականացնում է ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պարտադիր և ընտրովի խմբակների ծրագրերը, որոնք ոչ միայն նպաստում են բնապահպանությանը, այլև զարգացնում են սովորողների գիտելիքները առողջ կենսակերպի և անվտանգ վարքագծի վերաբերյալ, նպաստում են նաև գյուղատնտեսական գիտելիքների տեսական ու գործնական հմտությունների բարելավմանը։ Օրինակ՝ «Նորաբար ջերմատուն» https://www.facebook.com/Gegharkuniksecondaryschool/posts/pfbid0DoySmjiGTjWAa3AzYgjyMFEASxtf5afmx8AtofQ7UE3HwMzryjiutmj4zK7KZFbbl https://www.facebook.com/share/p/18a5FLKSij/ https://www.facebook.com/share/v/1AaWycSpYo/ «Առողջ ապրելակերպ» խմբակը, «Հայաստանի դպրոցական լավագույն մինի այգի» ամենամյա մրցույթը և այլն։

- Սովորողների *հոգևոր դաստիարակության* նպատակով դպրոցը սերտ համագործակցում է ՀՀ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հետ, որի արդյունքում սաները հաճախակի այցելություններ են ունենում եկեղեցի և մասնակից են դառնում եկեղեցական արարողություններին, որոնցից է Ոտնլվայի հանդիսավոր կարգը https://www.facebook.com/share/p/1587kuuYGK/
- *ՏՀՏ հմտությունների* ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու պատրաստ սերունդ կրթելու գործում մեծ է տարատեսակ զարգացնող ծրագրերի և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ սովորողների ինտելեկտն ու միտքը ճկուն դարձնելու նպատակով։ Մի շարք կազմակերպություններ համագործակցության առանցք են դարձել մեզ համար, այդ թվում՝ IQ Center Global Education-ը, որի արդյունքում դպրոցի սաները զարգացրել են իրենց Մենթալ թվաբանության գիտելիքները և մասնակցել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր»-ում տեղի ունեցած մենթալ թվաբանության միջազգային օլիմպիադային https://www.facebook.com/share/p/1EmmEgWWRS/ մասնակցել ենք «Գիտական պիկնիկ» մրցույթին և ճանաչվել ամենահետազոտող թիմ https://www.facebook.com/share/p/1J7zRHQFnu/ և այլն։

**Համայնքային, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ Համագործակցության՝**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Ավելացել են կրթամշակութային ծրագրերն ու նախագծերը, որոնց մասնակցում են սովորողները և մանկավարժները<br>• Ընդլայնվել է մշակութային արժեքների պահպանման ու զարգացման գործում սովորողների ներգրավվածության շրջանակը<br>• Մարզական միջոցառումների շնորհիվ սովորողների մոտ զարգացել է առողջ կենսակերպի մասին դաստիարակությանը<br>• Սովորողները առավել իրազեկված և պատրաստված են բնական տարբեր աղետների ժամանակ գործողությունների քայլաշարին<br>• Սովորողների հետաքրքրությունը ավելացել է գրքի և ընթերցանության հանդեպ<br>• Մանկավարժների մասնագիտական որակները, հմտությունները օր-օրի զարգանում են՝ շնորհիվ վերապատրաստումների ու դասընթացների<br>• Ֆիզիկական դաստիարակության զարգացման արդյունքում դպրոցը մասնակցում է տարբեր մրցարշավների և արձանագրում հաղթանակներ<br>• Բնապահպանական դաստիարակության արդյունքում դպրոցը հիմնել է խնձորենիների պուրակ, մինի այգի, դեկորատիվ ծառերով արահետ, ջերմատուն | • Առկա ձևաչափով մասնակցության դժվարություններ և խոչընդոտներ<br>• Երբեմն ծնողների կողմից դրսևորվող ոչ դրական վերաբերմունք<br>• Խոչընդոտ են հանդիսանում շենքային անբարենպաստ պայմանները<br>• Գործնական պարապմունքների քիչ քանակություն<br>• Էլեկտրոնային գրադարաններից օգտվելու իրազեկվածության պակաս,<br>• Վերապատրաստման լրացուցիչ դասընթացների մասնակցության մոտիվացիայի պակաս<br>• Կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստերի ոչ ժամանակին կազմակերպումը |

| | |
|---|---|
| • Սովորողների հոգևոր դաստիարակության արդյունքում դպրոցը իրականացնում է ճանաչողական էքսկուրսիաներ, եկեղեցական-ժողովրդական միջոցառումներ, ավանդույթներ և ծեսեր,<br>• Կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի հետ արդյունավետ համագործակցություն, անդամ դպրոցների հետ օրակարգային հարցերի քննարկումներ և փորձի փոխանակում | |

## ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ: ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ , ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն դպրոցի Կանոնադրության՝ բոլոր խորհրդակցական մարմինները մշակել են իրենց ներքին կանոնադրությունը, որը համապատասխանում է դպրոցի, համայնքի և պետության շահերին և հնարավորություններին: Դպրոցում միշտ կարևորվել է խորհուրդների ինքնավարությունը, ազատ գործելու հնարավորությունը: Նրանց անկողմնակալ և նվիրված աշխատանքի արդյունքից է կախված դպրոցի վարկանիշը:

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են մեթոդական միավորումները (5 մասնախումբ), մանկավարժական (31 անդամ), ծնողական (12 անդամ), աշակերտական (15 անդամ) խորհուրդները:

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորված են խորհրդակցական մարմիններ:



*Մանկավարժական խորհուրդը* կազմավորվել է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվել է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամ են: Դպրոցի առանցքային կարևոր խորհրդակցական մարմինը մանկավարժական խորհուրդն է: Այն մանկավարժական անձնակազմի մշտական կոլեգիալ ինքնակառավարման մարմին է,որը ձևավորվել է դպրոցի ուսումնական աշխատանքի հիմնական խնդիրները քննարկելու և լուծելու նպատակով: Մանկավարժական խորհրդի հիմնական նպատակներն ու խնդիրներն են միավորել դպրոցի կոլեկտիվի ջանքերը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի մակարդակը բարձրացնելու, մանկավարժական գիտության ձեռքբերումներն ու լավագույն փորձը գործնականում օգտագործելու համար:Մանկավարժական խորհիրդը իրականացնում է կառավարչական, մեթոդական,կրթական գործառույթներ:

Մանկավարժական խորհուրդը նիստերը անցկացնում է հիմնականում ավանդական զեկույց-քննարկումների, հաշվետվություն համազեկուցմամբ: Մինչ դեռ կարևոր են ոչ ավանդական մեթոդները՝ բանավեճ-քննարկում, ստեղծագործական զեկույց, մրցույթ, կլոր սեղան քննարկումներ: Կարևոր են խնդրահարույց հարցերի վերհանումը և բազմակարծիք, մասնակցային միջավայրում քննարկումների իրականացումը, առաջարկություններով հանդես գալը: Խորհուրդը որոշում և լուծում է դպրոցի ընթացիկ խնդիրները, վերլուծում է նրա գործունեությունը, դպրոցական կյանքի արդի խնդիրները, վերլուծում կրթության որակը, առանձին առարկաների դասավանդման վիճակը, դաստիարակությունը, ներկայացնում է մանկավարժական գիտության նվաճումները և դրանց օգտագործումը մանկավարժական կազմի կողմից:
Մանկավարժական խորհուրդը կոչված է ինքնուրույն մշակել թիմի սեփական դիրքորոշումները, ուղեցույցները և ուղղությունները, որոշել դպրոցի նպատակը, սկսել կրթական միջոցառումների շարք և իրականացնել զարգացման ծրագիրը, ուսումնական տարվա ցանկացած պահի ներկայացնել ուսումնական գործընթացի վիճակի և դասավանդման մակարդակի վերլուծություն, բացահայտել ընթացիկ և զարգացող խնդիրները, մշակել և վերլուծել խնդիրները՝ առաջ շարժվելու և հաջողության հասնելու համար: Մշակել պարգևատրման կարգ՝ խրախուսելով հետագա հաղթանակներն և ձեռքբերումները: Մանկավարժական խորհուրդը ծնողական խորհրդի հետ համատեղ որոշում է կայացնում սոցիալապես անապահով և ծնողազուրկ սովորողներին ՀՀ պետական բյուջեից դասագրքերի վարձավճարների փոխհատուցում իրականացնելու: 2024-2025 ուսումնական տարում ՀՀ պետական բյուջեից դասագրքերի վարձավճարների փոխհատուցում են ստացել 23 սովորող:
Մանկավարժական խորհուրդը հանդես է եկել հաստատության զարգացման ծրագրի կազմման հետևյալ առաջարկներով.

1. Դպրոց հրավիրել մասնագետների, ովքեր կզարգացնեն մանկավարժական աշխատողների գիտելիքներն ու հմտությունները ՏՀՏ ոլորտում:
2. Մոտիվացնել ծնողների ներառական կրթության բովանդակությունը ճիշտ ընկալելու և այն ի շահ սովորողի կիրառելու :
3. Ազրո և էկոկրթության ընդլայնում խմբակների, նախագծերի միջոցով:
4. Կարևորել մշակութային արժեքները. շնորհալի սովորողների մասնակցությամբ դպրոցում զարգացնել արվեստի որոշ ճյուղեր:
5. Բնութագրման միջոցով իրականացվող գնահատման գործիքների ճիշտ ընկալում, սովորողների և ծնողների համար բացատրական աշխատանքների միջոցով:

*Առարկայական մեթոդական միավորումներ՝մասնախմբեր*
Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դպրոցը միավորել է բնագիտական և մաթեմատիկական մասնախմբերը, արդյունքում՝ ձևավորել 5 մեթոդական միավորում:
Առարկայական մեթոդական միավորման նիստերը արձանագրվում են:
Մասնախմբերը պարբերաբար հրավիրել են նիստեր՝ ամիսը առնվազն մեկ անգամ, քննարկել ուսումնական և կազմակերպչական հարցեր, իրականացրել են դասալսումներ /75/, փոխադարձ դասալսումներ/30/, անցկացրել օրինակելի դասեր՝ թվով 25, գրավոր աշխատանքներ՝ թվով 59:

Մասնախմբերի առաջին նիստերում քննարկվել են առարկայական չափորոշիչներին, ուսումնական ծրագրերին, դասաբաշխմանը, թեմատիկ պլաններին վերաբերող հարցեր: Առաջարկություն են ներկայացրել տնօրինությանը ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինման մասին:

*Դպրոցի մեթոդական միավորումներն՝ մասնախմբերն են՝*

| | |
|---|---|
| Լեզուներ | 7 անդամ |
| Տարրական | 6 անդամ |
| Հումանիտար | 3 անդամ |
| ՆԶՊ, Ֆիզկուլտուրա | 3 անդամ |
| Բնագիտամաթեմատիկական | 6 անդամ |

*<u>Դպրոցի ծնողական խորհուրդը (12 անդամ)</u>*

Կրթական նպատակների արդյունավետ իրականացման համար ընտանիքի և դպրոցի միջև համագործակցությունը կարևորագույն պայման է: Կրթական արդյունավետ գործընթացի ներդրման համար կարևորվում է սոցիալական փոխգործուն համակարգը դպրոցի, սովորողների և նրանց ծնողների միջև: Հետևաբար շատ կարևոր է ընտանիքի և ծնողների դերը կրթական գործընթացում: Ընտանիքը գործում է առաջին հերթին որպես ուսումնական գործընթացի սուբյեկտ՝ ազդելով երեխայի անձի ձևավորման, նրա կրթական կարիքների վրա,և երկրորդ՝ որպես կրթական ծառայությունների պատշաճ իրականացման պահանջատեր:

Կրթության և դաստիարակության գործընթացի հաջողությունը էականորեն կախված է ուսուցչի և ծնողների համատեղ ջանքերից: Միայն այդ դեպքում կարելի է ակնկալել ցանկալի արդյունք:

Արդյունավետ համագործակցության համար շատ կարևոր է տվյալ իրավիճակի համար լավագույն ուղիներ փնտրելը և գտնելը՝ համագործակցելով ԾԽ-ի հետ: Կրթական նոր չափորոշիչների ներդրման համատեքստում ուսուցիչ սովորող-ծնող փոխգործակցության ապահովման նախապայմաններից մեկը ծնողներին տրամադրվող տեղեկատվական աջակցությունն ու կրթությունն է:

Կարևոր է, որ դպրոց-ծնող-աշակերտ եռանկյան յուրաքանչյուր կողմն իմանա իր պարտականությունները: Շատ կարևոր է՝ դպրոցը և ծնողական խորհուրդը միասին փնտրեն նոր միջոցներ՝ ունենալով ընդհանուր նպատակ՝ երեխայի զարգացումը և արդյունավետ կրթությունը:

Դպրոցի ԾԽ-ի անդամները ներգրավված են սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,

- աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը,
- օգնում է դպրոցին սովորողների պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում,
- մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,
- ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում,
- ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ:

Մեծ է ԾԽ-ի աջակցությունը դպրոցում իրականացվող ամենամյա միջոցառումների ժամանակ, այդ թվում՝ «Իմ Կյանքը համայնքում» աշակերտների փոխանակաման ծրագիր, «Այբապատում» նախագիծը, «Հայաստանի դպրոցական լավագույն մինի այգի» ամենամյա մրցույթ, «Բերքի փառատոն», «Համապետական շաքաթօրյակ», «Փոի փառատոն» և այլն:

❖ Քիչ են կազմակերպվում սեմինարներ, խորհրդատվություններ, սակայն դպրոցում ունենք

մանկավարժներ, ովքեր մասնակցել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Ծնողի դպրոց» ՀԿ-ի կողմից իրականացված զիտակցված ծնողավարության դասընթացին և փորձի փոխանակում իրականացրել ծնողական համայնքի հետ:

- Ծխ-ում կան անդամներ, ովքեր պատասխանատվություն չեն կրում հանդիպումների մասնակցելու և համագործակցելու համար, չունեն համապատասխան հմտություններ:
- Ծնողական խորհուրդը հանդես է եկել հաստատության զարգացման ծրագրի կազմման հետևյալ առաջարկներով.
    1. Ընդլայնել ծնող-դպրոց համագործակցությունը:
    2. Դրական ծնողավարման դասընթացներին մասնակից դարձնել ծնողներին:
    3. Սովորողների սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, մասնավորապես՝ ճաշարան մտնող լվացարանների վերանորոգում:
    4. Սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպում, ինքնուրույն կարողությունները զարգացնելու նպատակով:
    5. Ծնողներին մասնակից դարձնել արտադասարանական և արտադպրոցական նախագծերի և խմբակների աշխատանքների կազմակերպմանը:

**ԾԽ-ի և ԱԽ-ի ներգրավվածությամբ միջոցառումների մասին տեղեկատվության համար օգտվել ենք դպրոցի տնօրենի, ԴԱԿ-ի հաշվետվություններից:**

| **Հաստատության կողմից իրականացված միջոցառումները, որոնցում ԾԽ-ն ունի մասնակցություն և աջակցություն:** | | | | |
|---|---|---|---|---|
| **Միջոցառում** | **Իրականացման ժամանակը** | **Մասնակիցները, դրանց թիվը** | **Ծնողների ընդգրկվածության մակարդակը** | **ԱԽ ներգրավածությունը** |
| Միջոցառում՝ նվիրված «Գիտելիքի օրվան» | ամենամյա | 1-12 դասարաններ | 50% | 100% |
| «ՀՀ անկախության» | ամենամյա | 5-12 դասարաններ | 15% | 30% |
| «Հայոց բանակը» | ամենամյա | համադպրոցական | 40% | 80% |
| «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագիր | 2022թ | համադպրոցական | 50% | 75% |
| «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագիր [Իմ կյանքը համայնքում] | 2023թ․ | համադպրոցական | 60% | 80% |
| «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագիր ***ամփոփման մրցույթի տոնակատարություն*** https://www.youtube.com/watch?v=BtyRytL3jyA&t=5s | 2023թ․ | համապետական | 70% | 100% |
| «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագիր | 2024թ | համադպրոցական | 70% | 85% |
| «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագիր | 2025 | համադպրոցական | 70% | 85% |
| «Այբապատում» | 2022թ․ | համադպրոցական | 30% | 60% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| «Այբապատում» | 2023թ․ | համադպրոցական | 50% | 70% |
| «Այբապատում»<br>Այբապատում 4 | 2024թ․ | համադպրոցական | 60% | 70% |
| Համապետական շաբաթօրյակ | ամենամյա | համադպրոցական | 50% | 100% |
| «Դպրոցական մինի այգի»<br>*/«Լավագույն բերք» հատուկ անվանակարգ*<br>Մեր դպրոցական մինի այգին | 2021թ․ | համադպրոցական | 60% | 100% |
| «Դպրոցական մինի այգի»<br>***«1-ին տեղի հաղթող»***<br>Հայաստանի լավագույն դպրոցական մինի այգի | 2022թ․ | համադպրոցական | 50% | 100% |
| «Դպրոցական մինի այգի»<br>***Մրցույթի ամփոփման միջոցառում***<br>«Հայաստանի լավագույն դպրոցական մինի այգի 2022» | 2022թ․ | համապետական | 60% | 100% |
| «Դպրոցական մինի այգի»<br>/ ***«2-րդ պատվավոր հորիզոնական»***<br>Դպրոցական մինի այգի 2023 | 2023թ․ | համադպրոցական | 65% | 100% |
| «Դպրոցական մինի այգի»<br>/ ***«Մշտական մասնակից»/***<br>***https://www.facebook.com/share/p/1Qd55Nucox/*** | 2024թ․ | համադպրոցական | 50% | 100% |
| «Նորարար ջերմատուն»<br>https://www.youtube.com/watch?v=XpP3bOEOhcA | 2023-2024 ՈՒս․ | 8-9-րդ դասարաններ | 15% | 10% |
| «Նորարար ջերմատուն» | 2024-2025 ՈՒս․ | 8-9-րդ դասարաններ | 20% | 15% |
| Ծառատունկ | 2021թ, 2023թ | համդպրոցական | 10% | 70% |
| «Բերքի հոբելյանական փառատոն»<br>Բերքի փառատոն | 2023թ | համադպրոցական | 40% | 50% |
| «Փոխ փառատոն» | Պարբերաբար | համադպրոցական | 15% | 40% |
| «1+1» դպրոցական մարզային թերթ | ամենամսյա | 5-12-րդ դասարաններ | 30% | 60% |
| 44-օրյա պատերազմի մասնակից դպրոցի սաները | 2021թ | 5-12-րդ դասարաններ | 20% | 30% |
| Համբարձման տոնը<br>27 июля 2021 г. Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն - YouTube | 2022թ | 6-12րդ դասարաններ | 10% | 30% |
| «Հաղթական մայիս» երթ դեպի զոհերի հուշակոթող<br>Մայիսի 9-ը այսպես նշվեց | 2022 | 1-12-րդ դասարաններ | 30% | 48% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մեր դպրոցում | | | | |
| «Վերջին զանգ» | ամենամյա | համադպրոցական | 90% | 90% |
| «Ամանորյա տոնակատարություն» Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ | ամենամյա | համադպրոցական | 30% | 100% |
| «Մայրիկների տոնը» | ամենամյա | համադպրոցական | 60% | 100% |
| «Տատիկների և պապիկների մեծարման ցերեկույթ» | 2024թ | 3-րդ դասարան | 10% | 11% |
| «Սպորտակլին սերունդ» ***/Սպորտային զույքով պարգևատրում/*** Սպորտային սերունդ | 2022թ | 8-12-րդ դասարաններ | 5% | 35% |
| Երեխաների պաշտպանության օրը» Հունիսի 1՝ Երեխաների Պաշտպանության Միջազգային Օրը Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցում | ամենամյա | համադպրոցական | 90% | 100% |

**ԾԽ և ԱԽ մասնակցությունը «Հայաստանի դպրոցական լավագույն մինի այգի» ամենամյա մրցույթին**




**ԾԽ և ԱԽ մասնակցությունը «Իմ կյանքը համայնքում» աշակերտների փոխանակման ծրագրին**



Ամփոփելով ԾԽ-ի ներգրավվածությունը կրթական գործընթացում, հաստատության միջոցառումների և կառավարման գործընթացում, կարող ենք նշել, որ ժամանակի ընթացքում դպրոցական միջոցառումներին ավելացել է ծնողների ներգրավվածությունը, նախաձեռնողական և աջակցող վարքագիծը: Համապետական միջոցառումների մասնակցության ժամանակ Ծնողական համայնքի շնորհիվ հնարավոր է եղել մասնակցել մի շարք մրցույթների և գրանցել էական հաջողություններ:

- ԾԽ թույլ կողմ կարող ենք համարել ծնողավարմանն ուղղված վերապատրաստումներին մասնակցության ցանկության բացակայություն:
- Ներառական կրթության մասին ոչ բավարար տեղեկացվածության մակարդակը:
- Ինքնաբուխ մասնակցության պակաս դպրոցական ծրագրերին:
- ՀՊՉ-ի գնահատման նոր գործիքների մասին ոչ լիարժեք պատկերացումների պատճառով դժգոհության դրսևորումներ:
- Դպրոցական կյանքի բարելավմանն ուղղված իրավապահ մարմինների հետ արդյունավետ համագործակցության բացակայություն:

*Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է (15անդամ),*

- ԱԽ-ն ձևավորվում է աշակերտական համակազմից՝ 6-12-րդ դասարանների սովորողներից՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան:
- Աշակերտական խորհուրդը՝ ձևավորվել է յուրաքանչյուր դասարանի ամենաակտիվ ներկայացուցիչներից և զբաղվում է դպրոցական խնդիրներով՝ ելնելով ուսումնական հաստատության ավանդույթներից և սովորողների շահերից:
- Դպրոցը ընդգրկվել է «Զինիշյան հիշատակի» հիմնադրամի կողմից իրականացվող «ԱԽ-ի կարողությունների զարգացման» ծրագրին:
- Աշակերտական խորհուրդը մասնակցում է դպրոցական և արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը (փառատոններ, մրցույթներ, ցուցահանդեսներ), համագործակցում է ակումբների և հասարակական կազմակերպությունների հետ և նպաստում դպրոցի տեղեկատվական տարածքի զարգացմանը:
- Աշակերտական խորհրդի պատասխանատվությունը ներառում է դպրոցում ներքին կարգապահական կանոնների պահպանումը, դասագրքերի և դպրոցական գույքի վիճակի վերահսկման, յուրաքանչյուր դասարանի մաքրության պահպանման, դասղեկի հետ միասին դասարանական միջոցառումների իրականացմանը:
- ԱԽ–ում գործում են հանձնախմբեր՝
  - Կրթական,
  - մշակութային,
  - սպորտային,
  - ռազմամահայրենասիրական,
  - տեղեկատվական,
  - կարգապահական,
  - էկոլոգիական:
- Հանձնախմբերում ընդգրկված սովորողները կազմել են աշխատանքային պլան, և ակտիվ ու պատասխանատու իրագործում են տարբեր ծրագրեր:
- Հանձնախմբերի ղեկավարները առաջնորդում են սովորողներին, իսկ ընդհանուր նպատակներն ու արդյունքի հասնելու աշխատանքը միավորում են սովորողներին, սովորեցնում թիմ լինել և շփվել միմյանց հետ:
- Աշակերտական խորհուրդը սովորողներին հնարավորություն է տալիս առաջ քաշել իրենց գաղափարներն ու առաջարկները, մի խոսքով, այն հիմք է հանդիսանում ժողովրդավարական հասարակություն ստեղծելու համար:
- Սովորողները փորձ են ձեռք բերում կառավարման աշխատանքում, զարգացնում են կյանքի հմտություններ՝ ճկունություն, առաջնորդություն, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ:
- ԱԽ-ում կան անդամներ, ովքեր ունեն մեծ զբաղվածություն՝ ընդգրված են խմբակներում և

նախագծերում, և խնդիր է ժամանակի կառավարումը, միջոցառումների նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը:

- ԱԽ-ի անդամները ակտիվ մասնակցում են համայնքային նախագծերին, բացահայտում շնորհալի սովորողներին և կազմակերպում միջոցառումներ:
- ԱԽ-ի անդամները ունեն ձևավորման, կազմակերպչական հմտությունների զարգացման կարիք:
- Պասիվ է համագործակցությունը այլ դպրոցների ԱԽ-ների հետ:
- Աշակերտական խորհուրդը հանդես է եկել հաստատության զարգացման ծրագրի կազմման հետևյալ առաջարկներով.

1. Սահմանել մասնագիտական կողմնորոշման բաց դասեր մասնագետների հրավիրմամբ:
2. Կազմակերպել համախմբման միջոցառումներ՝ «Ընկերության շաբաթ» թիմային խաղեր և հանդիպումներ:
3. Շարունակական դարձնել կանաչապատման, աղբի տեսակավորման և մաքրության միջոցառումները:
4. Ընդլայնել ցուցահանդեսներ, համերգներ և ազգային մշակույթին նվիրված միջոցառումների կազմակերպումը:
5. Ուսումնական տարվա ընթացքում անցկացնել ինտելեկտուալ մրցույթներ /խաղ-վիկտորինաներ/:
6. Ամիսը մեկ անգամ կազմակերպել «Հարց ու պատասխան» հանդիպում տնօրինության և սովորողների միջև՝ բաց քննարկման ձևաչափով:

ԱԽ-ն 2024-2025 ուստարվա ընթացքում իրականացրել է հանձնախմբերի ոլորտներից բխող տարբեր միջոցառումներ և նախագծեր, որոնցից են «Բացահայտենք Գեղարքունիքը» / https://www.facebook.com/watch?v=671472689023576 / , «Շնորհավոր տոնդ, սիրելի՛ ուսուցիչ» https://www.facebook.com/share/v/1AD238gznB/

- ԱԽ-ի գործունեության մասին տվյալները վերցված են աշակերտական խորհրդի արձանագրություններից: Ամփոփ նկարագիրը ստորև՝

| | Բովանդակություն | Ժամկետ | Կատարող |
|---|---|---|---|
| 1. | | | |
| 2. | ԱԽ-ի վերապատրաստում | Հոկտեմբեր | ԱԽ |
| 3. | ԱԽ տարեկան աշխատանքային պլանի մշակում | Հոկտեմբեր | ԱԽ |
| 4. | Հանձնախմբերի ստեղծում | Հոկտեմբեր | Անահիտ Ստեփանյան |
| 5. | ԱԽ նախաձեռնությունների գաղափարների հստակեցում | Նոյեմբեր | ԱԽ |
| 6. | ԱԽ կազմի հետ հանդիպումներ դպրոցում | Նոյեմբեր | ԱԽ |
| 7. | Ներմարզային ԱԽ ցանցի առցանց հանդիպում | Նոյեմբեր | ԱԽ |
| 8. | Հանդիպումներ ՀԿ-ների/ՏԻՄ-երի հետ | Նոյեմբեր | ԱԽ |
| 9. | ԱԽ վերապատրաստում | Նոյեմբեր | ԱԽ |
| 10. | Դասավանդման մեթոդների բարելավում | Նոյեմբեր | Սոֆյա Ավետիսյան |
| 11. | Դպրոցի տարածքի մաքր ում | Նոյեմբեր | Արսեն Կարապետյան |
| 12. | Էքսկուրսիա (1 հատ) | Նոյեմբեր | Անահիտ Ստեփանյան |
| 13. | ԱԽ նախաձեռնություններ ներկայացում | Դեկտեմբեր | ԱԽ |
| 14. | ԱԽ կազմի հետ հանդիպումներ դպրոցում | Դեկտեմբեր | ԱԽ |
| 15. | Հանդիպումներ ՀԿ-ների/ՏԻՄ-երի հետ | Դեկտեմբեր | Ախ |
| 16. | Գեղարքու նյաց ձմեռ | Դեկտեմբեր | Վլադ Առաքելյան |

| | | | |
|---|---|---|---|
| 17. | Սեմինար՝ «Ինքնաճանաչողության» և «Ժամանակի կառավարման» թեմաներով (յուրաքանչյուր թեմայով 2 հատ) | Դեկտեմբեր | Մանե Գրիգորյան |
| 18. | Ամանորյա միջոցառում | Դեկտեմբեր | Անուշիկ Հովհաննեսյան |
| 19. | ԱԽ նախաձեռնությունների իրականացում | Հունվար | ԱԽ |
| 20. | Ներմարզային ԱԽ-ների առցանց հանդիպում | Հունվար | ԱԽ |
| 21. | Սպորտլանդիա | Հունվար | Դավիթ Կարապետյան |
| 22. | Բաց քննարկումներ աշակերտների հետ՝ «Աշակերտների իրավունքներն ու «Պարտականությունները» թեմայով | Հունվար | Անահիտ Ստեփանյան |
| 23. | ՀՀ բանակի օրվան նվիրված միջոցառում | Հունվար | Հերմինե Կարապետյան |
| 24. | ԱԽ նախաձեռնությունների իրականացում | Հունվար | ԱԽ |
| 25. | ԱԽ կազմի հետ հանդիպումներ դպրոցում | Փետրվար | ԱԽ |
| 26. | Միջմարզային ԱԽ ցանցի առցանց հանդիպում | Փետրվար | ԱԽ |
| 27. | Համագործակցություն ՀԿ-ների/ՏԻՄ-երի հետ | Փետրվար | ԱԽ |
| 28. | Համագործակցություն համայնքի հետ՝ համայնքային և երիտասարդական խնդիրների վերհանում | Փետրվար | Գայանե Ստեփանյան |
| 29. | Հոգեբանի այցելություն դպրոց | Փետրվար | Մարիամ Աբրահամյան |
| 30. | ԱԽ նախաձեռնությունների իրականացում | Մարտ | ԱԽ |
| 31. | ԱԽ կազմի հետ հանդիիպումներ դպրոցում | Մարտ | ԱԽ |
| 32. | Համագործակցության ՀԿ-ների/ՏԻՄ-երի հետ | Մարտ | ԱԽ |
| 33. | Սեմինար՝ <<Սոցիալական մեդիայի ազդեցությունները>> թեմայով (2 հատ) | Մարտ | Մարինա Այվազյան |
| 34. | Մարտի 8-ին նվիրված միջոցառ ու մ | Մարտ | Հերմինե Կարապետյան |
| 35. | Դպրոցի տարածքի մաքրում | Մարտ | Լիաննա Կարապետյան |
| 36. | Ներմարզային ԱԽ-ների առցանց հանդիպում | Ապրիլ | ԱԽ |
| 37. | ԱԽ նախաձեռնությունների իրականացում | Ապրիլ | ԱԽ |
| 38. | Համագործակցություն ՀԿ-ների/ՏԻՄ- երի հետ | Ապրիլ | ԱԽ |
| 39. | Էքսկուրսիա (1 հատ) | Ապրիլ | Անահիտ Ստեփանյան |
| 40. | Սպորտլանդիա | Ապրիլ | Մարի Հարոյան |
| 41. | Փորձի փոխանակման և արդյունքների ամփոփման երկօրյա գազաթնաժողով | Մայիս | ԱԽ |
| 42. | Ծրագրի գնահատո ւ մ | Մայիս | ԱԽ |
| 43. | Արշավ (1 հատ) | Մայիս | Հասմիկ Ավետիսյան |
| 44. | Բաց քննարկումներ աշակերտների հետ՝ «Քայլեր ապագայի համար» թեմայով | Մայիս | Աահիտ Ստեփանյան |

❖ Վերլուծելով ԱԽ-ի գործունեությունը, կարող ենք նշել, որ արդյունավետ համագործակցությունների,

բաց քննարկումների, փորձի փոխանակման, ՀԿ-ների և ՏԻՄ մարմինների հետ համատեղ աշխատանքների, սեմինարների ու էքսկուրսիաների արդյունքում բարձրանում է սովորողների իրազեկվածության աստիճանը:

- Դպրոցի և համայնքի կարիքները բացահայտվում են, և առաջարկվում կայուն լուծումներ:
- Նախաձեռնվում են տարատեսակ աշխատանքներ, որոնք միտված են սովորողների կրթական, ռազմահայրենասիրական, մշակութային և էկոլոգիական կարիքների բարելավմանը:
- Թերի է ԱԽ-ում առողջապահությանն ուղղված աշխատանքների կատարողականը:

| Հաստատության խորհրդակցական մամինների գործունեության | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| • Խորհրդակցական մարմինների արդյունավետ աշխատանք:<br>• Մանկավարժական խորհուրդը/ ՄԽ/ որոշում և լուծում է դպրոցի ընթացիկ խնդիրները,<br>• ՄԽ-ն վերլուծում է դպրոցի գործունեությունը, դպրոցական կյանքի արդի խնդիրները,<br>• ՄԽ-ն վերլուծում է կրթության որակը, առանձին առարկաների դասավանդման վիճակը, դաստիարակությունը,<br>• ՄԽ-ն ներկայացնում է մանկավարժական գիտության նվաճումները և դրանց օգտագործումը մանկավարժական կազմի կողմից:<br>• ՄԽ-ն բացահայտում է դպրոցի կարիքը, սկսում կրթական միջոցառումների շարք,<br>• ՄԽ-ն իրականացնում է զարգացման ծրագիր, ուսումնական տարվա ցանկացած պահի ներկայացնում ուսումնական գործընթացի վիճակի և դասավանդման մակարդակի վերլուծություն,<br>• Մանկավարժական խորհուրդը ծնողական խորհրդի հետ համատեղ որոշում է կայացնում սոցիալապես անապահով և ծնողազուրկ սովորողներին ՀՀ պետական բյուջեից դասագրքերի վարձավճարների փոխհատուցում իրականացնելու:<br>• Մանկավարժական խորհրդի անդամների արդյունավետ համագործակցություն ՏՄԱԿ-ի և ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ:<br>• Մեթոդական միավորումների արդյունավետ գործունեություն մասնախմբերի ներսում<br>• Արդյունավետ համագործակցություն տնօրենի տեղակալի հետ:<br>• Մեթոդական միավորումները քննարկում են ԿԱՊԿՈՒ սովորողներ ԱՈՒՊ-ը:<br>• Մեթոդական միավորումները կազմակերպում են դպրոցական առարկայական օլիմպիադաներ:<br>• Մասնախմբի ղեկավարի հետևողականություն պլանով նախատեսված աշխատանքը իրականացնելիս<br>• Մասնախմբերը ակտիվ հանդես են գալիս ուսումնական պլանով սահմանված դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ | • ՄԽ-ի նիստերի վարման ոչ ավանդական մեթոդների կիրառման պակաս /բանավեճ-քննարկում, ստեղծագործական զեկույց, մրցույթ, կլոր սեղան քննարկումներ/:<br>• Մանկավարժական կազմի նախաձեռնությամբ մանկավարժական խորհրդի նիստերի կազմակերպման պակաս:<br>• Մեթոդական միավորումների կողմից առարկայական մրցույթների կազմակերպուման պակաս<br>• Մասնախմբերի՝ միմյանց միջև համագործակցության պակաս:<br>• Ծնողավարման քննարկումներին ծնողների ընդգրկվածության պակաս և ցանկության բացակայություն:<br>• Ներառական կրթության մասին ոչ բավարար տեղեկացվածության մակարդակը ծնողների շրջանում:<br>• Ծնողների կողմից ՀՊՉ-ի գնահատման նոր գործիքների մասին ոչ լիարժեք պատկերացումների պատճառով դժգոհության դրսևորումներ:<br>• Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս<br>• Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցություն պակաս<br>• Վճարովի երկարօրյա ուսուցման խմբակների բացակայություն /ծնողական նախաձեռնություն չկա/<br>• Թույլ մասնակցություն ուսումնական պրոցեսի կազմակերպման մեջ<br>• Կարողունակությունների կիրառման պակաս արտադասարանական խմբակներում:<br>• ԱԽ-ում տղաների մասնակցության և նախաձեռնողականության պակաս: |

| | |
|---|---|
| առաջարկություններով,<br>• Դպրոցի ԾԽ-ի անդամները ներգրավված են սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,<br>• աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը,<br>• օգնում է դպրոցին սովորողների պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում,<br>• մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,<br>• ԾԽ-ն ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ:<br>• Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրազեկում, միմյանց միջև արդյունավետ համագործակցություն, հետադարձ կապի ապահովում:<br>• Սովորողների շրջանում մոնիտորինգային աշխատանք, մասնակցային կառավարման փորձի հմտություն<br>• Գրադարանի հետ ակտիվ համագործակցություն, սովորողների կողմից ընտրված թեմայով տեսանյութերի պատրաստում, ռեպորտաժների ցուցադրություն, հավասար պայմանների ապահովում՝ զերծ խտրական վերաբերմունքից,<br>• Որոշակի սովորողների մոտ մեդիագրագիտության պատշաճ իմացություն,<br>• Արտադասարանական միջոցառումների իրականացում,<br>• Միջդպրոցական միջոցառումների կազմակերպման հմտություն,<br>• Մարզային սպորտային միջոցառումներին մասնակցություն: | • Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների բացակայություն: |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1971թին: Շենքը տիպային է՝ եռահարկ, նախագծային հզորությունը՝ 385 աշակերտ, չնայած ներկայումս դպրոցում կրթություն է ստանում 174 աշակերտ: Դպրոցի ընդհանուր հողատարածքը կազմում է 1,307 հա,որից շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 2767,3$մ^2$:

*Դպրոցի ձեռքբերումները.*

1. Դպրոցին կից տարածքում 2016 թվականին կառուցվել է հարմարավետ մինի ֆուտբոլի դաշտ՝

789մ² տարածքով, որտեղ անցկացվում են ֆիզկուլտուրայի դասերը և առողջ ապրելակերպի որոշ պարապմունքներ, ինչպես նաև ֆուտբոլի պարապմունքներ, համայնքային և միջհամանքային մրցումներ թե՛ աշխկների, և թե՛ տղաների թիմերի համար: Այն ոչ միայն դպրոցի, այլ նաև համայնքի համար անհաժեշտ կառույց է: Վերջերս Ֆուտբոլի դաշտի տարածքով անցնող կոյուղատարը վնասվել էր և կոյուղաջուրը լցվում էին ֆուտբոլի դաշտ՝ առաջացնելով նստվածք: Խնդրի լուծման համար դիմել ենք «Աժդահակ» բնապահպանական էկոակումբ ՀԿ-ին: Վերջինս պատրաստակամություն է հայտնել աջակցել ստեղծված խնդրի լուծմանը և վերանորոգել կոյուղատարը:

2. Դպրոցին կից տարածքի կարևոր մաս է համարվում «Ջերմատունը», որը կառուցվել է ՄԱԿ-ի պարենի համաշխարային ծրագրի ֆինանսավորմամբ, այն ունի 400 մ² տարածք, որից 200 մ²–ն հիդրոպոնիկ ջերմատան տարածքն է, իսկ մյուս 200 մ²՝ հողային: Հիդրոպոնիկ մասում աճեցնում ենք ելակ, իսկ հողային մասում՝ լոլիկ, վարունգ և պղպեղ: Ջերմատունը մեր համայնքի և դպրոցի համար ունի առանձնահատուկ նշանակություն:

- «Ջերմատունը» համարվում է ՄԽ-ի, ԾԽ-ի և ԱԽ-ին համախմբման համար կարևոր կառույց, բացի այդ՝ մեր տարածաշրջանում այն միակն է:
- Ջերմատան մշակման շնորհիվ դպրոց և համայնք ներմուծվեց նորարարություն. մեր սովորողներին հնարավորություն տրվեց մշակել տարբեր մշակաբույսեր, հետևել բույսերի աճի ընթացքին, իրականացնել նախագծային աշխատանքներ և իրենց գործնական գիտելիքները կիրառել սեփական հողամասում և համայնքում:
- Ջերմոցը օրինակ դարձավ համայնքի բնակիչների համար և շատ ընտանիքներ նախագծեցին սեփական ջերմոցներ և թողնելով արտագնա աշխատանքը՝ վերադաձան հայրենիք և իրենց ներդումն ունեն գյուղում ջերմատնային տնտեսության զարգացման գործում:
- «Ջերմատան» շնորհիվ դպրոցում ավելացան աշխատատեղեր, և համագործակցությունների շրջանակը ընդլայնվեց:

3. ՄԱԿ-ի պարենի համաշխարային ծրագրի ֆինանսավորմամբ և աջակցությամբ դպրոցն արդեն ունի արևային վահանակներ՝ 25 կվտ հզորությամբ, որից արտադրված էլեկտրաէներգիան օգտագործվում է դպրոցի և ճաշարանի համար:

4. Դպրոցամերձ տարածքի զարդն է «Խնձորենիների պուրակը»՝ 0,2 հա տարածությամբ: Այն հիմնվել է համայնքապետարանի աջակցությամբ՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 106-ամյակին և ցեղասպանության զոհ դարձած մեր հայրենակիցների հիշատակին:

5. Փոքրիկ այգուց բացի, դպրոցի բակային տարածքում «Էյ-Թի-Փի» բնապահպանական ՀԿ-ի աջակցությամբ տնկել ենք դեկորատիվ ծառեր և թփեր:

6. Համայնքապետարանի աջակցությամբ մի փոքր հողատարածք մաքրելով տարիների աղբից և կուտակումներից՝ հերկել և հատկացրել ենք «Հայաստանի դպրոցական լավագույն մինի այգի» մրցույթին:

8. Դպրոցը, բարեկարգ բակից և տարածքից բացի, աչքի է ընկնում իր վերանորոգված և կահավորված գրադարանով /66 մ²/, ընթերցասրահով / 66մ²/ և գրապահոցով 30 մ²: Վերանորոգման աշխատանքները իրականացվել է «Հանրային Հեռուստաընկերության» ֆինանսավորմամբ/Եվրոտեսիլի հասույթից/ և Դպրոցի համաֆինանսավորմամբ:

9. Դպրոցն ունի վերանորոգված և կահավորված ճաշարան:

10. Դպրոցում գործում է «1+1» դպրոցական-մարզային թերթի խմբագրությունը /86 մ²/,որը կառուցվել է դպրոցի շրջանավարտի օժանդակությամբ:

11. Դպրոցը ունի «Արմաթ» ինժեներական լաբորատորիա /54 մ²/, այնտեղ անցկացվում են ռոբոտաշինության պարապմունքներ և ՏՀՏ դասընթացներ, որի արդյունքում սաները մասնակցել են «Խելացի քաղաք» ինքնակառավարվող ռոբոտներ մրցույթին և գրավել են պատվավոր 3-րդ հորիզոնականը https://www.facebook.com/share/p/1F4E46UXJV :

12. Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, որի վերանորոգման աշխատանքները կատարվել է համայնքի բարերարի օժանդակությամբ:

13. Դպրոցում 2017 թվականից գործում է «Նախակրթարան», որը կառուցվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության ֆինանսավորմամբ. այստեղ ուսանել են համայնքի և հարևան համայնքների 5-6 տարիքային խմբի երեխաները:

14. Դպրոցի շենքում առկա է ինտերնետային կապ, շենքն ամբողջությամբ էլեկտրաֆիկացված է,

բայց հոսանքալարերի մաշվածության պատճառով երբեմն տեղի է ունենում վթարային իրավիճակներ:

15. 2021 թվականին Գեղարքունիքի մարզպետարանի, համայնքապետարանի և մի շարք բարերարների աջակցությամբ փոխվել են դասասենյակների և 3-րդ հարկի միջանցքի պատուհանները, իսկ մյուս հարկերինը՝ անմխիթար վիճակում են:

16. ԿԳՄՍ նախարարության և ԾԻԳ-ի համատեղ աջակցությամբ 2024-2025 ուսումնական տարում վերանորոգվել և վերազինվել են հաստատության քիմիա-կենսաբանության, ֆիզիկայի,աշխարհագրության լաբորատորիաները և ինֆորմատիկայի կաբինետը նոր սերնդի նյութատեխնիկական և լաբորատոր սարքավորումներով:

Դպրոցի ենթակառուցվածքների քանակային տվյալների, մակերեսների, վիճակների, նյութական ռեսուրսներով հագեցվածության վերաբերյալ լրացուցիչ տվյալներ վերլուծության համար օգտվել ենք Դպրոցի ներքին գնահատումից և ներկայացրել համապատասխան աղյուսակներում՝

| **Դասասենյակի համարը** | **Քանակը** | **Դասասենյակի մակերեսը (քմ)** |
|---|---|---|
| ԴասասենյակN1 /3-րդ/ | 1 | 57.7 |
| Դասասենյակ N2 /4-րդ/ | 1 | 57.7 |
| Դասասենյակ N3 /7-րդ// | 1 | 66.5 |
| Դասասենյակ N4 /11-րդ/ | 1 | 29.0 |
| Դասասենյակ N5 /10-րդ | 1 | 29.0 |
| Դասասենյակ N 6 /5-րդ/ | 1 | 66.5 |
| Դասասենյակ N7 1-ին/ | 1 | 57.7 |
| Դասասենյակ N 8 /2-րդ/ | 1 | 41,3 |
| Դասասենյակ N9 /6-րդ/ | 1 | 57,7 |
| Դասասենյակ N10 /9-րդ/ | 1 | 37,1 |
| Դասասենյակ N11 /12-րդ/ | 1 | 57.7 |
| Դասասենյակ N12 / 8-րդ/ | 1 | 57,0 |

| **Տարածքների անվանումները** | **Քանակը** | **Մակերեսը /քառակուսի մետր/** |
|---|---|---|
| նախակրթարան | 1 | 74,3 |
| շախմատի կաբինետ | 1 | 31,2 |
| գրադարան | 1 | 57,7 |
| ընթերցասրահ | 1 | 66,5 |
| լաբորատորիա №1 քիմիա/կենսաբանություն | 1 | 66,5 |
| համակարգչային կաբինետ | 1 | 57.7 |
| «Արմաթ» ինժիներական լաբորատորիա | 1 | 47.8 |
| լաբորատորիա №2 /աշխարհագրություն | 1 | 57,0 |
| լաբորատորիա №3/ ֆիզիկա | 1 | 57,0 |
| ռազմագիտության դասասենյակ | 1 | 44,7 |
| «1+1» թերթի խմբագրություն | 1 | 79,6 |
| սպորտդահլիճ | 1 | 162.0 |
| հանդերձարան | 2 | 16,0 և 16,5 |
| սպորտգույքի պահոց | 1 | 17,4 |
| հանդիսությունների դահլիճ | 1 | 154,7 |
| ճաշարան | 1 | 78,0 |
| ճաշարանի պահոց | 1 | 7,5 |
| պահոցներ | 2 | 66 |
| արխիվային տարածք | 1 | 28.9 |
| պահակակետ | 1 | 28,5 |
| սանհանգույց | 3 | 27,0 |

Թեև Դպրոցի շենքը երբևէ չի հիմնանորոգվել, սակայն վերոնշյալ փաստարկները թույլ են տալիս սույն տվյալներն համարել առավելություններ և գրանցած հաջողություններ: Նշենք, որ դպրոցն ունի ջեռուցման լոկալ հանակարգ, ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, առկա է տաք ջրամատակարարում ճաշարանում և խոհանոցում: Սակայն առաջին հարկի տարրական կորպուսի, աստիճանավանդակների հարակից տարածքի,առաջին և երկրորդ հարկի հին և փտած պատուհաններից քամին և ցուրտը ներխուժում է դպրոց և միատար ջերմության ստանալու համար առաջացնում դժվարություններ՝ գերծախս: Դպրոցի երրորդ հարկի միջանցքի պատուհանները վերանորոգվել են համայնքային բյուջեով:

| Հաստատության շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի մասին՝ | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Դպրոցն ունի՝<br>• Նախակրթարան<br>• Մինի ֆուտբոլի դաշտ<br>• «Ջերմատուն»<br>• Արևային վահանակներ<br>• Խնձորենիների պուրակ<br>• Դեկորատիվ ծառեր և թփեր<br>• «Մինի այգի»<br>• Գրադարան, ընթերցասրահ և գրապահոց<br>• Վերանորոգված և կահավորված ճաշարան<br>• «1+1» դպրոցական-մարզային թերթի խմբագրություն<br>• «Արմաթ» ինժեներական լաբորատորիա<br>• Համակարգչային կաբինետ<br>• Լաբորատորիաներ<br>• Սպորտային պարագաների առկայություն:<br>• Դպրոցն ունի ջեռուցման լոկալ հանակարգ, ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, առկա է տաք ջրամատակարարում ճաշարանում և խոհանոցում: | • Դպրոցի շենքը երբևէ չի հիմնանորոգվել, բացակայում են թեքահարթակները:<br>• Դպրոցի տանիքը ամբողջությամբ վերափոխման կարիք ունի, անձրևաջրերն ու ձնհալքը անմիջապես թափանցում է ներս և վտանգ է ներկայացնում նոր վերանորոգված և կահավորված ֆիզիկայի ու աշխարհագրության լաբորատորիաների համար:<br>• Դպրոցի սպորտդահլիճի հատակը ամբողջությամբ փտած է և վտանգավոր ֆիզիկական պատրաստվածության պարապմունքներն իրականացնելիս:<br>• Սպորտդահլիճի հանդերձարանները չեն համապատասխանում հանրակրթական պահանջներին:<br>• Դպրոցի սանհանգույցները հին վերանորոգված են և կոյուղու հետ կապված խնդիրներ են առաջանում հատկապես տարվա ցուրտ եղանակներին:<br>• Դպրոցի հանդիսությունների դահլիճը հին է, ունի լուսավորության պակաս, բեմահարթակը տարիների ընթացքում փտել և վնասվել է, բացակայում են լուսային և ձայնային սարքավորումները:<br>• Դպրոցը չունի բուժկետ և բուժաշխատող: Կարիքից ելնելով համագործակցում ենք համայնքի բուժքույրերի հետ:<br>• Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց համար նախատեսված ռեզուս-սենյակ չկա, ինչպես նաև միջավայրը հարմարեցված և անվտանգ չէ. բացակայում են համապատասխան դիդակտիկ նյութերն ու պարագաները կրթության նպատակային ապահովման համար:<br>• Դպրոցի տարածքի անվտանգությունը ապահովող ճաղաշարերի բացակայություն, անբարեկարգ բակ: |

# ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

**1.Ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների բարելավում՝**

| *Խնդիրներ* | *Գործողություններ/ ժամկետ* | *Անհրաժեշտ միջոցներ* | *Արդյունքների չափման մեխանիզմներ* | *Ռիսկեր* | *Ռիսկերի կանխման գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| 1. 1 Ավագ դպրոց տեղափոխված սովորողների քանակի աճի ապահովում | 1. 1.1. Հոսքային խմբերի ձևավորում:<br><br>Յուրաքանչյուր ուստարվա օգոստոս ամսին | 1.1.1.1 Սովորողների մասնագիտական կողմնորոշում և մոտիվացիա<br><br>1.1.1.2. Համապատասխան մասնագետ<br><br>1.1.1.3 Դասասենյակ | Ավագ դպրոց տեղափոխվող սովորողների քանակի աճ | Շաբաթական ծանրաբեռնվածությամբ պայմանավոր-ված համապա-տասխան մանգետների պակաս: | Նոր մասնագետների համալրում |
| | 1.1.2. Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների կազմակերպում<br><br>2025-2030 | 1.1.2.1 Սովորողների հետ քննարկումների անցկացում, Մասնագիտա-կան կողմնորոշման խմբակի աշխատանքնե-րի շրջանակներում<br><br>1.1.2.2. Մասնագիտ-ական կողմնորոշման միջոցառում-ների իրականացում հաշվի առնելով սովորողների նախասիրություն ները | Առարկայական միջոցառումն երին և օլիմպիադան երին սովորողների մասնակցությ ան դինամիկա | Արդի աշխատաշուկայում արագ փոփոխվող պահանջարկ | Ապահովել ճկունություն և չառաջնորդվել «մեկ մասնագիտությ ուն ողջ կյանքի ընթացքում» սկզբունքով: |
| 1.2. Առարկայական օլիմպիադաներում | 1.2.1.Առարկայական խմբակների կազմակերպում | 1.2.1.2. Համապատասխան մասնագետի | Օլիմպիադան երի մասնակցությ | Մոտիվացիա յի պակաս | Խրախուսել յուրաքանչյուր մասնակցութ- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հաջողությունների աճի ապահովում | 2025- 2030 | առկայություն | ան դինամիկայի համեմատությ ուն նախորդ ուսումնական տարվա հետ | | յուն |
| | 1.2.2. Առարկայական օլիմպիադաների մասնակիցների խրախուսում և պարգևատրում<br><br>2025-2030 | 1.2.2.1. Պատվոգրերի և շնորհակալագր երի միջոցով խրախուսում<br><br>1.2.2.2. Առաջատար փորձի քննարկում և ներկայացում աշակերտական ժողովներում | Օլիմպիադան երին մասնակցությ ան քանակի աճ, գրանցած հաջողություն ներ | Ակնկալվող արդյունքնե-րի բացակայությ ուն | Հաճախակի քննարկումներ և խրախուսումնե ր |
| | 1.2.3. Շրջայցների կազմակերպում և համագործակցությո ւն մասնագիտա-կան դպրոցների հետ<br><br>2025-2030 | 1.2.3.1. Տրանսպորտա-յին միջոց<br><br>1.2.3.2. Պարտականությ ունները կատարող համապատասխ ան անձ | Նվազագույնը 2 այց | Միջոցների հայթայթման դժվարությու ն | Օգտվել պետական բյուջեով սահմանված գործուղումների հնարավորությ ուններից |
| 1.3 Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով երկարօրյա ուսուցման կատարելագործում, սովորողի ծնողի դիմումի հիման վրա երկարօրյա ուսուցման կազմակերպում: | 1.3.1 Ծնողների իրազեկման մակարդակի բարձրացում. Համագործակցությո ւն ծնողական խորհրդի հետ<br><br>2025-2030 | 1.3.1.1 Ծնողական ժողով<br><br>1.3.1.2 Համապատաս-խան դասընթացներ | Ծնողական ժողով յուրաքանչյու ր կիսամյակի սկզբին առնվազն 1 անգամ | Ծնողական ժողովների մասնակցությ ան պակաս | Անհատական զրույցներ և բացատրական աշխատանքներ |
| | 1.3.2 | 1.3.2.1Վերադաս | Դպրոցական | Միջոցների | Համագործակցո |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մասնակիցներին ընդգրկել «Դպրոցական սնունդ» ծրագրում<br><br>2025-2030 | մարմնի թույլտվություն<br><br>1.3.2.2 Ծնողական և համայնքային աջակցություն | սնունդ ծրագրից օգտվող սովորողների քանակի աճ | բացակայություն<br><br>Համագործակցության ցանկության պակաս | ւթյունների շրջանակը ընդլայնել |
| 1.4 Աջակցել սովորողներին և մանկավարժներին՝ նոր չափորոշչի պահանջների արդյունավետ կիրառման գործընթացում՝ զարգացնելով նրանց կարողություններն ու հմտությունները: | 1.4.1 Միջդասարանական փորձի փոխանակում և համագործակցություն<br>2025-2030 | 1.4.1.1միջդասարանական դասալսումների, նախագծերի իրականացում | Իրականացնել առնվազն 2 նախագիծ, 6 դասալսում: | Դասացուցակով նախատեսված դասաժամերի բաշխվածության անհամապատասխանություն | Նախապես կատարել ժամերի փոփոխություն |
| | 1.4.2. Խրախուսել մանկավարժներին լրացուցիչ դասընթացներին մասնակցելիս. համագործակցել ԿԶՆԱԿ-ի հետ<br><br>2025-2030 | 1.4.2.1 Կատարել բացատրական աշխատանք, կարևորել դասընթացների արդյունավետությունը: | Համեմատել առաջավոր փորձը և ի ցույց դնել մանկավարժական խորհրդի նիստերում: | Ուսուցչի մոտիվացիայի բացակայություն: | Դասալսումներ ի քննարկումներ |
| | 1.4.3.Դպրոց հրավիրել մասնագետների, ովքեր կզարգացնեն մանկավարժական աշխատողների գիտելիքներն ու հմտությունները տարբեր ոլորտներում<br><br>2025-2030 | 1.4.3.1 Համապատասխան մասնագետների ձեռքբերում | Մենթոր-դպրոցների, ինչպես նաև համագործակից դպրոցների փորձը կիրառել մեր դպրոցում: | Հրավիրյալ մասնագետների՝ իրենց աշխատաժամանակի հետ կապված խնդիրներ | Հրավիրել ոչ աշխատանքային օրերին կամ դասընթացը իրականացնել հեռավար ձևաչափով: |

**2.Մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների, զարգացման կարիքների բարելավում՝**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. 1 Կամավոր ատեստավորման մասնակցող ուսուցիչների ավելացում | 2. 2.1 Մանկավարժների մոտ բացատրական աշխատանքների միջոցով ստեղծել | 2.2.1.1 Տրամադրել ուղեցույցներ, գրականություն, ՏՀՏ միջոցներ իրականացնել մասնագիտական քննարկումներ | Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների փորձով շահագրգռել | Կամավոր ատեստավորման մասնակցության և շեմը չհաղթահարելու դեպքում աշխատանքը | Բացատրել օրենքի տարրը՝ համաձայն որի, հնարավորություն է տրվում պարտադիր ատեստավորման միջոցով հարստացնել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ցանկություն կամավոր ատեստավորմանը մասնակցելու<br><br>2025-2030 յուրաքանչյուր տարի | | մյուսներին: Կամավոր ատեստավորմանը մասնակցած և շեմը հաղթահարած մանկավարժների թիվը ավելացնել յուրաքանչյուր տարի առնվազն 2-ով | կորցնելու վախ մանկավարժների մոտ, մասնագիտական ցածր մակարդակի գիտելիք | մասնագիտական գիտելիքները և շարունակել աշխատանքը: |
| 2.2.Մանկավարժների մասնագիտական և մեթոդական զարգացմանն ուղղված վերապատրաստումների կազմակերպում: | 2.2.1Մանկավարժներին մշտապես տեղեկացնել կրթական ոլորտի փոփոխությունների մասին,ապահովել մասնակցությունը նոր չափորոշչի կիրառման հմտությունները զարգացնող դասընթացներին,<br><br>2025-2030 ուստարիներ, մշտապես | Իրազեկել իրավական ակտերին, կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, տրամադրել ուսումնական նյութեր, մեթոդական ուղեցույցներ, ՏՀՏ միջոցներ, | Համեմատել նոր չափորոշչային նորմերը ճիշտ կիրառող մանկավարժների թիվը նոր չափորոշչով վերապատրաստված, սակայն ոչ արդյունավետ կիրառող մանկավարժների թվի հետ | Կենսաթոշակի շեմին մոտ մանկավարժները խուսափում են լրացուցիչ ծանրաբեռնվածությունից: | Տանել բացատրական աշխատանք, որ կենսաթոշակի անցնելը դեռևս մասնագիտական գործունեության ավարտ չէ: |
| | 2.2.2. Խրախուսել մանկավարժներին լրացուցիչ դասընթացներին մասնակցելու<br><br>2025-2030 | Համատեղ մասնակցություն կրթական ոլորտի գիտաժողովներին | Լրացուցիչ դասընթացներին մանկավարժների մասնակցության քանակի համեմատություն | Մանկավարժի ցանկության բացակայություն: | Դպրոց հրավիրել մասնագետների, ովքեր կզարգացնեն մանկավարժական աշխատողների գիտելիքներն ու հմտությունները տարբեր ոլորտներում |
| 2.3. ԹԳՀԳ առարկայի ուսուցչի | 2.3.1 ԹԳՀԳ առարկայի ուսուցչի | Դասալսումներ և դրանց արդյունքների | Առարկայական որակի ամփոփ | Լաբորանտի հաստիքի համալրման | Իրազեկման միջոցառումներ բուհերում՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մասնագիտական գիտելիքներով վերազինման և լաբորանտի որակավորում ունեցող մասնագետի ապահովում | վերապատրաստման կազմակերպում<br><br>Դիմել համապատասխան բուհ՝ լաբորանտի որակավորում ունեցող մասնագետ գործուղելու համար<br><br>Հրապարակել հայտարարություն՝ լաբորանտի թափուր հաստիքի մասին<br>2025-2026 ուստարի | վերլուծություն<br><br>Առարկայական շաբաթների անցկացում<br><br>Առարկայական որակի գնահատում (1-ին կիսամյակում)<br><br>Տեղեկատվության հրապարակում դպրոցի կայքէջում<br><br>Համագործակցություն բուհերի հետ | վերլուծություն<br><br>Դասալսումների արդյունքների համեմատություն վերապատրաստումից առաջ և հետո<br><br>Լաբորանտի հաստիքի համալրման փաստ | անհնարինություն՝ մասնագետների պակասի պատճառով | շրջանավարտներին դպրոցում աշխատելու խրախուսման նպատակով<br><br>Ոչ մանկավարժական կրթություն ունեցող թեկնածուներին տեղեկացնել մանկավարժի որակավորում ստանալու հնարավորության մասին՝ 30 կրեդիտային ծրագրի միջոցով |
| 2.4. Մանկավարժական աշխատանքում գործնական պարապմունքների իրականցման դժվարությունների հաղթահարում | 2.4.1. Նյութատեխնիկական բազայի ապահովում<br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br>2025-2030 | Համագործակցություն պետական և ՏԻՄ մարմինների հետ<br><br>Համաձայնեցումներ, պաշտոնական դիմումների կազմավորում<br><br>Հաշվետվություն առկա ռեսուրսների վերաբերյալ<br><br>Ներդրումային առաջարկների պատրաստում և ներկայացում | Նյութատեխնիկական բազայի համալրման փաստաթղթային և վիզուալ փաստարկում<br><br>Գործնական պարապմունքների քանակի և որակի աճ<br><br>Մանկավարժների և սովորողների հետադարձ կապի միջոցով արդյունքների վերլուծություն | Նյութական ռեսուրսների հնարավորությունների պակաս | Դիմել շահառու մարմիններին<br><br>Առկա ռեսուրսների օպտիմալ բաշխում և կիրառման վերանայում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2.4.2. ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքին համապատասխան նյութատեխնիկական բազայի համալրում. Համագործակցել ՏՄԱԿ-ի հետ<br><br>2025-2030 | Համագործակցություն ՏՄԱԿ-ի հետ՝ հատուկ կրթական ռեսուրսների ձեռքբերման և տրամադրման նպատակով | Ներկա և ձեռք բերված ռեսուրսների համեմատություն<br><br>ԿԱՊԿՈՒ սովորողների ներգրավվածության մակարդակի բարձրացում | Նյութական ռեսուրսների հնարավորությունների պակաս | Դիմել շահառու մարմիններին<br><br>Առկա ռեսուրսների արդյունավետ բաշխման մեխանիզմների կիրառում |
| **3.Դպրոցը որպես համայնքային զարգացման կենտրոն ձևավորելու հեռանկարները՝** | | | | | |
| 3.1. Կրթամշակութային ծրագրերին ու նախագծերին սովորողների ու մանկավարժների առկա ձևաչափով մասնակցության ապահովում | 3.1.1. Համագործակցել լիազոր մարմնի, կրթամշակութային կազմակերպությունների հետ.<br><br>2025-2030 | 3.1.1.1 Կրթամշակութային համապատասխան նախագծին մասնակցության ցանկություն կամ հայտի ձևակերպում,<br><br>3.1.1.2 Համապատասխան ծրագրի մասին իրազեկում խորհրդակցական մարմինների ներսում:<br><br>3.1.1.3 Առկա տարբերակով մասնակցության համար միջոցների հայթայթում: | Կրթամշակութային ծրագրերի ու նախագծերի մասնակցության քանակական աճ, ինչպես նաև մասնակիցների ընդգրկվածության աճ: | Առկա ձևաչափով մասնակցության համար անհրաժեշտ միջոցների բացակայություն: Հետաքրքրվածության պակաս որոշ խմբերի շրջանում | Համագործակցություն լիազոր մարմնի կամ համայնքի հետ:<br><br>Տեղեկատվական արշավներ՝ ծրագրերի արժեքն ու կարևորությունը շեշտադրելու համար |
| | 3.1.2. Առկա ձևաչափով ծրագրերի և | 3.1.2.1 Կրթամշակութային համապատաս | Դպրոց հրավիրված կրթամշակ | Համագործակցության մերժում: | Համապատասխան աջակցությամբ դպրոց հրավիրված ծրագրերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նախագծերի տեղայնացում<br><br>2025-2030 | խան նախագծի հրավերի ձևակերպում<br><br>3.1.2.2 Տվյալ ծրագրին մասնակցության աhարժեշտության վերհանում: | ութային ծրագրերի ու նախագծեր քանակական ու որակական աճի զնահատում | | աջակցման համար համագործակցել լիազոր մարմնի հետ |
| 3.2. Մշակութային արժեքների պահպանման նպատակով համագործակցելիս ծնողների շրջանում դրական վերաբերմունքի ձևավորում | 3.2.1.Դրական ծնողավարման դասընթացներին մասնակից դարձնել ծնողներին<br><br>2025-2030 | 3.2.1.1. Ծնողավարման դասընթացների կազմակերպում և ծնողների ակտիվ ներգրավում | Ծնողական ներգրավվածության ցուցանիշների վերլուծություն՝ մասնակցության հաճախականությամբ | Ծնողների անտարբերություն կամ ժամային անհամապատասխանություն/մասնակցության դժվարություններ | Իրազեկման արշավներ՝ ծնողական ներգրավվածության կարևորության շեշտադրմամբ<br><br>Ճկուն մասնակցության ձևաչափեր՝ առցանց և անհատական |
| | 3.2.2. Համագործակցել համապատասխան կառույցների հետ<br>2025- 2030 | 3.2.2.1 Կապի հաստատում համայնքային և պետական կառույցների հետ | Համագործակցության փաստ | Համագործակցության դժվարություն որոշ կառույցների հետ | Կառույցների հետ համագործակցության նախնական պլանավորում, փոխշահավետ նախաձեռնություններին առաջարկում |
| | 3.2.3. Ընդլայնել ծնող-դպրոց համագործակցությունը:<br><br>2025-2030 | 3.2.3.1 Մշակութային նախաձեռնությունների համատեղ կազմակերպում<br>Առցանց հաղորդակցման հարթակների կիրառում | Դպրոց-ծնող համատեղ նախաձեռնությունների քանակ և դրանց արդյունքներ | Ծնողների անտարբերություն կամ ժամային անհամապատասխանություն/մասնակցության դժվարություններ | Իրազեկման արշավներ՝ ծնողական ներգրավվածության կարևորության շեշտադրմամբ |
| 3.3 ԱԻՆ ԾՓ և Ոստիկանության տարածքային բաժնի հետ գործնական համագործակցության խորացում՝ դպրոցում արտակարգ իրավիճակների թեմայով | 3.3.1. Դպրոցի կողմից առաջարկվող գործնական պարապմունքների ավելացում | 3.3.1.1. Գործնական պարապմունքների ծրագրի զարգացում և ներդրում<br><br>Տեխնիկական միջոցներ<br><br>Ներգրավված | Պարապմունքների քանակ և մասնակցության ցուցանիշներ | Տեխնիկական միջոցների կամ կազմակերպչական աջակցության բացակայություն | Պարապմունքները պլանավորել ուսումնական տարվա սկզբին<br><br>Օգտագործել դպրոցի առկա ռեսուրսները, համագործակցել համայնքի հետ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| գործնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման և սովորողների իրազեկվածության բարձրացման նպատակով: | 2025-2030 | ուսուցիչների նախապատրաստում | | | |
| | 3.3.2. Առարկայական համագործակցության ընդլայնում<br><br>2025-2030 | 3.3.2.1. Համագործակցության հաստատում գրավոր պայմանավորվածությունների տեսքով<br><br>Հրավերներ ներկայացուցչական հանդիպումների համար<br><br>Համատեղ միջոցառումների պլանավորում՝ դպրոցի և կառույցների միջև | Հանդիպումների և միջոցառումների քանակ<br><br>Ուսուցիչների և սովորողների ներգրավվածության գնահատում | Կառույցների զբաղվածություն կամ ժամանակի պակաս | Նախապես կապ հաստատել և ժամանակացույց համաձայնեցնել |
| 3.4 Էլեկտրոնային գրադարաններից օգտվելու իրազեկվածության բարձրացում սովորողների և մանկավարժների շրջանում | 3.4.1. Կազմակերպել փորձի փոխանակում մարզային, համայնքային գրադարանների հետ<br>2025-2030 | 3.4.1.1. Հանդիպումներ, այցելություններ և քննարկումների կազմակերպում<br>Տրանսպորտային և տեխնիկական կազմակերպում | Փորձի փոխանակման միջոցառումների քանակ<br><br>Մասնակիցների հետադարձ կապ | Համագործակցային դժվարություններ | Ընտրել հասանելի և պատրաստակամ գործընկեր գրադարաններ<br><br>Անհրաժեշտության դեպքում փոխարինել այցերը առցանց ձևաչափով՝ վեբինարներ, Zoom հանդիպումներ |
| | 3.4.2.Սովորողներին ընդգրկել Էլեկտրոնային գրադարանների համալրման գործում | 3.4.2.1. Ուսուցիչների կողմից համակարգված առաջադրանքներ՝ թեմատիկ նյութերի | Ավելացված նյութերի քանակ<br><br>Ներգրավված սովորողնե | Սովորողների անբավարար թվային գրագիտություն կամ մոտիվացիայի պակաս | Նախնական թրեյնինգ սովորողների համար<br><br>Խրախուսման մեխանիզմների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2025-2030 | որոնման, ստեղծման, թվայնացման վերաբերյալ | րի թիվ | | ներդրում |
| | 3.4.3 Խրախուսել նախաձեռնողականություն էլեկտրոնային գրադարանների ստեղծման գործում<br><br>2025-2030 | 3.4.3.1. Ներքին մրցույթների, նախաձեռնողական ծրագրերի անցկացում<br><br>Տեխնիկական աջակցություն նախաձեռնությունների իրականացման համար | Ստեղծված կամ բարելավված էլեկտրոնային գրադարանների թիվ<br><br>Հետադարձ կապ | Ստեղծագործական գաղափարների պակաս կամ տեխնիկական բարդություններ | Մենթորների ներգրավում |
| | 3.4.3.Դպրոց հրավիրել մասնագետների, ովքեր կզարգացնեն մանկավարժական աշխատողների գիտելիքներն ու հմտությունները տարբեր ոլորտներում 2025-2030 | 3.4.3.1 Մասնագետների հայտնաբերում և հրավիրում<br><br>Թեմատիկ սեմինարների պլանավորում<br><br>Ուսումնական նյութերի պատրաստում և տարածում | Մասնակցած մանկավարժների թիվ<br><br>Սեմինարներից հետո անցկացված գիտելիքի ստուգում | Մասնագետների հասանելիության կամ ֆինանսավորման խնդիր | Համագործակցել պետական կամ հասարակական կազմակերպությունների հետ |
| 4. **Խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում՝** | | | | | |
| 4.1. ՄԽ-ի նիստերի վարման ոչ ավանդական մեթոդների կիրառման աճի ապահովում /բանավեճ-քննարկում, ստեղծագործական զեկույց, մրցույթ, կլոր սեղան քննարկումներ/: | 4.1.1. Կազմակերպել ոչ ավանդական մեթոդների կիրառմամբ /բանավեճ-քննարկում, ստեղծագործական զեկույց, մրցույթ, կլոր սեղան քննարկումներ/ ՄԽ-ի նիստեր:<br><br>2025-2030 | 4.1.1.1 Նիստերի թեմատիկ պլանավորում Ոչ ավանդական մեթոդների կիրառման ուղեցույց Մանկավարժների ոգևորում և նախապատրաստում | Մանկավարժների ակտիվության գնահատում և նրանց հետադարձ կապ | Ոչ ավանդական մեթոդների նկատմամբ անհամաձայնություն կամ անպատրաստակամություն | Սկզբում կիրառել մեկ-երկու մեթոդ՝ աստիճանաբար ընդլայնելով<br><br>Նախապես իրազեկել, տեղեկացնել թե ինչու է կարևոր նոր մեթոդների ներդրումը |
| | 4.1.2. Խրախուսել յուրաքանչյուր մանկավարժի ներգրավածությունն ու առաջարկը: | 4.1.2.1 Նիստերի ժամանակ թեմաների շուրջ բաց | Մանկավարժների կողմից ներկայացված | Մանկավարժների պասիվություն, վախ արտահայտվ | Ստեղծել վստահելի մթնոլորտ՝ նպաստելով բաց արտահայտմանը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2025-2030 | քննարկումներ ի կազմակերպում, բոլորի առաջարկների հավաքագրում<br><br>4.1.2.2. Գործնական քննարկումներ ի վարում մանկավարժնե րի նախաձեռնությամբ | առաջարկն երի քանակ<br><br>Ըստ առաջարկն երի կատարված գործողությ ունների գնահատում | ելու, առաջարկներ ը բարձրաձայն ելու | Կարևորել յուրաքանչյուր առաջարկ՝ նիստում դրանց անդրադարձ կատարելով |
| 4.2. Խթանել մասնախմբերի միջև արդյունավետ համագործակցությո ւնը՝ նպաստելով փորձի փոխանակմանը և փոխադարձ աջակցությանը | 4.2.1. Կազմակերպեր բոլոր մասնախմբերի մասնակցությամբ ժողովներ:<br><br>2025-2030 | 4.2.1.1. Ժողովների պլանավորում, օրակարգի նախապատրաստում | Կազմակեր պված ժողովների քանակ, մասնակցու թյան ցուցանիշնե ր<br><br>Ժողովների արդյունքում մշակված որոշումներ ի կատարում | Ժամանակաց ույցի անհամապա տասխանությ ուն մասնախմբեր ի միջև | Ժողովները կազմակերպել ուսումնական ծրագրերին չխանգարող ժամանակներում |
| | 4.2.2. Յուրաքանչյուր մասնախումբ իր գործունեության և առաջավոր փորձի փոխանակում կատարի:<br><br>2025-2030 | 4.2.2.1 Փորձի փոխանակման համար մասնախմբերի ներկայացումնե րի կազմակերպում | Փոխառված ու կիրառված գաղափարն երի արձագանք | Մասնախմբե րի թերագնահա տվածություն կամ պասիվությու ն | Ոգեշնչող ու հաջողված օրինակների ներկայացում |
| | 4.2.3. Վեր հանվեն մասնախմբերի ներսում առաջացած խնդիրները և փոխադարձ քննարկումներով լուծման մեթոդներ առաջարկել: | 4.2.3.1 Հարցումների անցկացում խնդիրների բացահայտման նպատակով Միջմասնախմբ ային քննարկումների կազմակերպում Լուծման հստակ տարբերակների | Խնդիրների թվի նվազում<br><br>Մասնախմբ երի արձագանք ների, փորձի փոխանակմ ան հիման վրա | Խնդիրների բաց քննարկման բարդություն կամ լարվածությու ն մասնախմբեր ի միջև | Ապահովել վստահության մթնոլորտ Օգտագործել կառուցողական քննարկման ձևաչափեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2025-2030 | ձևակերպում | ձևավորված լուծումների կատարում | | |
| 4.3. Բարձրացնել ծնողների իրազեկվածության մակարդակը ներառական կրթության մասին: | 4.3.1. Կազմակերպել ծնողական խորհրդի և ՏՄԱԿ-ի մասնակցությամբ համատեղ ծնողական ժողով: 2025-2030 | 4.3.1.1 Ժողովի կազմակերպման համար համապատասխան հարթակի ապահովում<br><br>ՏՄԱԿ մասնագետների մասնակցություն | Իրազեկման մակարդակի աճ<br><br>Մասնակցած ծնողների թիվ | Ծնողների պասիվություն կամ մասնակցությունից հրաժարում | Իրազեկել ժողովների կարևորության մասին<br><br>Խրախուսել ակտիվ մասնակցությունը |
| | 4.3.2. Ծնողխորհրդի նախագահների միջոցով ծնողներին ծանոթացնել փաստաթղթաշրջանառությանը: 2025-2030 | 4.3.2.1. Նյութերի մշակման և տպագրության ապահովում Ծնողխորհրդի նախագահների նախապատրաստում | Ծնողների տեղեկացվածության գնահատում | Տեղեկատվության սխալ փոխանցում կամ թերի մեկնաբանություն | Նախապես պատրաստել պարզեցված տեղեկատվական նյութեր․ ուղեցույցներ |
| | 4.3.3. Ուսուցչի օգնականների և ուսուցիչների համատեղ աշխատանքներով բարձրացնել ծնողների իրազեկվածության մակարդակը: 2025-2030 | 4.3.3.1. Հանդիպումների պլանավորում Իրազեկման բովանդակության նախապատրաստում | Մասնակցած ծնողների թիվ Հարցումներ | Ծնողների կողմից տեղեկատվության անտեսում, պասիվություն | Օգտագործել պարզ, տեսողական նյութեր |
| 4.4. ԱԽ-ում տղաների մասնակցության և նախաձեռնողականության ակտիվացում: | 4.4.1. Խրախուսել տղաների մասնակցությունը և հատուկ շնորհակալագրեր հատկացնել: 2025-2030 | 4.4.1.1. Շնորհակալագրերի և վկայագրերի պատրաստում Տղաների մասնակցության գնահատում | Տղաների մասնակցության աճ, ոգևորվածության նկատելի աճ | Տղաների մոտ ցածր մոտիվացիա կամ հետաքրքրության պակաս | Հանրայնացնել ակտիվ տղաների մասնակցությունը Ներկայացնել, թե ինչպես է խորհրդում ներգրավվածությունը նպաստում ապագա կարիերային և բուհերի ընդունելությանը |
| | 4.4.2. Կազմակերպել միջոցառումներ | 4.4.2.1. Միջոցառումների թեմաների | Մասնակցած տղաների քանակ | Դիսկրիմինացիայի զգացողությու | Զուգահեռ իրականացնել նաև միջոցառումներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | միայն տղաների կամ մեծամասամբ տղաների մասնակցությամբ:<br><br>2025-2030 | ընտրություն, կազմակերպում Միջոցառման պլան, տեխնիկական ապահովում | Վստահություն բարձրացման գնահատում հարցմամբ | ն աղջիկների մոտ<br><br>Ինքնաարտահայտման դժվարություն տղաների մոտ | հավասարությունը ընգծելու համար<br><br>Ոչ բանավոր դերերի առաջարկ՝ տղաներին կազմակերպչական, տեխնիկական |
| | 4.4.3. Իրականացնել հաճախակի զրույցներ և խթանել սովորողների մասնակցության ցանկությանը:<br><br>2025-2030 | 4.4.3.1. Դասղեկների և հոգեբանների ներգրավում<br><br>Խմբային և անհատական ձևաչափերի կազմակերպում | Մասնակցության պատրաստակամության աճ<br><br>ԱԽ նոր տղա անդամների ներգրավվածություն | Տղաների կողմից զրույցների լուրջ չընդունում կամ ձևական վերաբերմունք | Կիրառել մտերմիկ, ոչ պաշտոնական մոտեցում<br><br>Հնարավորություն տալ փորձաշրջանային մասնակցության ԱԽ-ում |
| 4.5. Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների ձևավորում և զարգացում: | 4.5.1. Ձևավորել հոգաբարձուների խորհուրդ:<br><br>2025-2030 | 4.5.1.1. Իրազեկման արշավ, համայնքի ներգրավում, կանոնադրություն, անդամների ընտրություն | Առաջին նիստի անցկացման հետադարձ կապ | Համայնքի անտարբերություն կամ վստահության պակաս | Ընտրել հեղինակավոր ու վստահված անձանց, ընդգծել խորհրդի դերը դպրոցի զարգացման մեջ |
| | 4.5.2. Ձևավորել շրջանավարտների խորհուրդ:<br><br>2025-2030 | 4.5.2.1. Շրջանավարտների ակումբի կազմավորում, հրավերներ, սոցիալական մեդիայի օգտագործում տարածման համար | Շրջանավարտների արձագանքների քանակ<br><br>Խորհրդի ակտիվություն, կազմակերպած միջոցառումների, հավաքների քանակ և ակտիվություն | Շրջանավարտների կապի վերականգնման դժվարություն<br><br>Շրջանավարտների զբաղվածություն | Առաջարկել մասնակցության ճկուն ձևաչափեր<br><br>Ընդգծել շրջանավարտների ներգրավման կարևորությունը |
| | 4.5.3. Խրախուսել ցանկացած համագործակցություն ձևավորված խորհուրդների հետ: | 4.5.3.1. Համատեղ ծրագրերի, միջոցառումների պլանավորում | Համագործակցային նախագծերի քանակ, արձագանքներ, միջոցառու | Խորհուրդների պասիվություն | Խրախուսել ակտիվությունը, տալ նոր միջոցառումների գաղափարներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2025-2030 | | մների մասնակցություն | | |
| **5. Հաստատության շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի ավելացում** | | | | | |
| 5.1. Բարելավել դպրոցի շենքային պայմանները՝ իրականացնելով շենքի կոսմետիկ և տանիքի ամբողջական վերանորոգում: | 5.1.1. Համագործակցել վերադաս մարմինների և բարերարների հետ: 2025-2030 | 5.1.1.1. Շենքի վիճակի մասին հաշվետվություններ կազմում Համագործակցության առաջարկներ Պաշտոնական գրություններ, հանդիպումների կազմակերպում բարերարների հետ | Գործնական քայլերի արձանագրում Բարերարների պատրաստակամություն, համագործակցության հաստատում | Մերժում աջակցության առաջարկին | Առաջարկ ներկայացնել հիմնավորված փաստաթղթերով Շարունակել բանակցությունները |
| | 5.1.2. Իրականացնել դպրոցի ներսում կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ: 2025-2030 | 5.1.2.1 Նյութերի, գույքի հավաքագրում Աշխատանքային խմբի ձևավորում Համայնքային աջակցություն | Վերանորոգված դասարանների և տարածքների քանակ | Սահմանափակ նյութական և մարդկային ռեսուրսներ | Ներգրավել համայնքի անդամներին, ունենալ ֆինանսավորման այլընտրանքային տարբերակներ |
| | 5.1.3. Շահառու կազմակերպությունների կամ պետական աջակցությամբ փոխել Դպրոցի տանիքը: 2025-2030 | 5.1.3.1. Տանիքի տեխնիկական փորձաքննություն Հայտեր պետական ծրագրերում դրամաշնորհային միջոցների որոնում | Տանիքի փոխման աշխատանքների ընթացքի վերաբերյալ արձանագրություն | Ֆինանսավորման բացակայություն, միջոցների սահմանափակություն | Դիմել միաժամանակ մի քանի շահառու կազմակերպությունների, պետական աջակցության |
| 5.2. Դպրոցի սպորտդահլիճի և հանդերձարանների վերանորոգում և կահավորում: | 5.2.1. Իրականացնել սպորտդահլիճի կոսմետիկ կամ ամբողջական վերանորոգում, հատակի փոխման աշխատանքներ: | 5.2.1.1. Վերանորոգման նախահաշիվ, շինանյութեր, շինաշխատանքների իրականացնող խմբերի | Վերանորոգված տարածքի չափը Արձագանք սովորողներից և ուսուցիչնե | Մեծ ծախսեր կամ ոչ մասնագիտորեն կատարված աշխատանքներ | Ընտրել վստահելի մասնագետներ Իրակացնել փուլային վերանորոգում՝ ըստ առաջնահերթության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2025-2030 | ձևավորում | րից | | |
| | 5.2.2. Հանդերձասրահներում անհրաժեշտ վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքներ իրականացնել: 2025-2030 | 5.2.2.1. Կահույքի, շինանյութի ձեռքբերում 5.2.2.2. Վերանորոգման նախահաշիվ, պլանավորում | Նորգված հանդերձասրահների, ձեռքբերված գույքի քանակ, օգտվողների արձագանք | Մեծ ծախսեր կամ ոչ մասնագիտորեն կատարված աշխատանքներ | Ընտրել վստահելի մասնագետներ Իրականացնել փուլային վերանորոգում՝ ըստ առաջնահերթության |
| | 5.2.3. Համագործակցել շահառու կազմակերպությունների, բարերարների և վերադաս մարմնի հետ: 2025-2030 | 5.2.3.1. Հաշվետվություն դպրոցի սպորտային միջավայրի վիճակի մասին 5,2,3,2, Պաշտոնական դիմումներ, բանակցություններ | Ստացված աջակցության քանակ Համագործակցությունների արձանագրություններ | Աջակցության ձգձգում կամ մերժում | Դիմել միաժամանակ մի քանի կազմակերպությունների, բարերարների |
| 5.3. Դպրոցի հանդիսությունների դահլիճի կոսմետիկ վերանորոգում: | 5.3.1. Դպրոցի հանդիսությունների դահլիճի առաստաղի կոսմետիկ վերանորոգում և ներկում իրականացնել: 2025-2030 | 5.3.1.1. Շինանյութեր, ներկեր, համապատասխան աշխատանքային խումբ | Վերանորոգված մակերեսի քառակուսի մետրերի քանակ | Վատ որակի աշխատանք կամ սահմանափակ միջոցներ | Տեխնիկական հսկողություն Դիմում աջակցության համար շահառու մարմինների |
| | 5.3.2. Բեմահարթակի բարելավում իրականացնել: 2025-2030 | 5.3.2.1 Բեմահարթակի հատուկ շինանյութեր, վերանորոգման նախագծում, անվտանգության ստուգում | Ապահով և հարմար բեմահարթակի առկայություն | Տեխնիկական սխալներ կամ սահմանափակ միջոցներ | Տեխնիկական հսկողություն Դիմում աջակցության համար շահառու մարմինների |
| | 5.3.3. Դահլիճը կահավորել համապատասխան ձայնային և լուսային սարքերով: 2025-2030 | 5.3.3.1. Ձայնային սարքեր, լուսային համակարգեր, տեխնիկական մասնագետի ներգրավում | Տեղադրված սարքավորումների քանակ Օգտագործման հաճախականություն միջոցառումների ժամանակ | Սարքավորումների ձեռքբերման դժվարություն կամ պահպանման խնդիր | Դիմել աջակից կազմակերպություններ Սովորեցնել սարքավորումներից ճիշտ օգտվելու եղանակը |
| 5.4. | 5.4.1 Համագործակցել | 5.4.1.1. | Ձեռքբերվա | Համագործակ | Ունենալ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ռեզուս-սենյակի, թեքահարթակների, դիդակտիկ նյութերի ու պարագաների ձեռքբերում: | ՏՄԱԿ-ի հետ դիդակտիկ նյութերի ու պարագաների ձեռքբերման նպատակով:<br><br>2025-2030 | Ֆինանսական միջոցներ, գրավոր համաձայնագիր ՏՄԱԿ-ի հետ, դիդակտիկ նյութերի ցանկ | ծ նյութերի ու պարագաների քանակը, կիրառությունը ուսումնական գործընթացում | ցող կառույցի ուշ պատասխան | այլընտրանքային տարբերակներ աջակցության |
| | 5.4.2 Դպրոցի շենքային պայմանների բարելավման աշխատանքներին ավելացնել թեքահարթակների կառուցապատման աշխատանքները:<br><br>2025-2030 | 5.4.2.1 Ֆինանսավորում շինարարական աշխատանքների համար, շինանյութեր, աշխատակազմ | Կառուցված թեքահարթակների առկայություն և օգտագործման հասանելիություն | Սահմանափակ միջոցներ | Նախապես մշակել բյուջե, դիմել շահառու մարմինների |
| | 5.4.3. Դպրոցում առանձնացնել դասասենյակ, որը կծառայի որպես ռեզուս-սենյակ. կահավորել համապատասխան անվտանգ գույքով և ուսումնադաստիարակչական պարագաներով:<br>2025-2030 | 5.4.3.1. Կահույք, ուսումնական և դաստիարակչական նյութեր, վերանորոգման ծախսեր | Ռեզուս-սենյակի առկայություն և շահագործման արդյունավետություն ու հաճախակիություն | Սահմանափակ ներքին ռեսուրսներ | Այլընտրանքային տարբերակների մշակում |

| 6.Դպրոցում ազրո և էկոկրթության բարելավում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***Խնդիրներ*** | ***Գործողություններ/ ժամկետ*** | ***Անհրաժեշտ միջոցներ*** | ***Արդյունքների չափման մեխանիզմներ*** | ***Ռիսկեր*** | ***Ռիսկերի կանխման գործողություններ*** |
| 6.1 Դպրոցում էկոկրթության միջավայրի բարելավում | 6.1.1.Էկոխմբակի կամ դասարանի բացում.<br>2025-2026 ուստարի | 6.1.1.1. Ունենալ խմբակավար | Ապահովել սովորողների քանակ՝ առնվազն 8 | Սովորողների ցանկության պակաս, մասնագետի պակաս | Միջոցառումների կազմակերպում |
| | 6.1.2.Համագործակցել «Աժդահակ» բնապահպանական էկոակումբի հետ | 6.1.2.1. Կնքել համաձայնագիր | Առնվազն ամիսը մեկ անգամ կազմակերպել փոխադարձ թեմատիկ | Կառույցի կողմից անհամաձայնության գործոն | Ներկայացնել համագործակցության հնարավոր արդյունավետությունը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2025-2030 | | դասեր | | բնապահպանության հարցում |
| 6.2. Դպրոցում ագրոկրթության միջավայրի բարելավում | 6.2.1.ընդլայնել այն խմբակների գործունեությունը, որոնք պարունակում են գյուղատնտեսական բաղադրիչներ 2025-2030 | 6.2.1.1. Վերապատրաստված խմբակավարի ապահովում | Առնվազն 8 սովորող և մեկ խմբակավար | Սովորողների ցանկության պակաս, մասնագետի պակաս | Գյուղատնտեսության կարևորում բոլոր հնարավոր ձևերով |
| | 6.2.2.համագործակցել «Դպրոցական սնունդ» բարեգործական հիմնադրամի հետ | 6.2.2.1. Խմբակավարի վերապատրաստում | Համագործակցությունը ապահովել տարին առնվազն 4 անգամ | Համապատասխան դասընթացների բացակայություն | Դիմել նման գործունեությամբ զբաղվող այլ կազմակերպությունների |

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման իմ ծրագրի նպատակները բխում են Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի խնդիրներից, որոնք լիահույս եմ, որ իրատեսական լուծումներ կունենան 5 տարվա ընթացքում: Չնայած Դպրոցը ունի բազում խնդիրներ, սակայն երբեք չենք ընկրկել դժվարությունների առաջ և քայլել ենք ժամանակին համընթաց՝ դիմակայելով ժամանակի մարտահրավերներին:
Մեր նոր ծրագրի իրագործումը թույլ կտա մեզ ունենալ համամարդկային, ազգային արժեքներ կրող և տարածող, համայնքի նորարարական և մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց՝ հասանելի յուրաքանչյուրին:

- Այսօր և ընդհանրապես շատ է քննարկվում, թե ինչպիսին պետք է լինի դպրոցը, որն է այն սահմանը, չափանմուշը, որին պետք է ձգտել ու հասնել: Ես տեսնում եմ դպրոցը իդեալական մի բարձունք, որը պետք է ամեն օր հաղթահարել, բայց հնարավոր չէ հասնել գագաթին, քանզի յուրաքանչյուր օր մենք առնչվում ենք նորանոր մարտահրավերների և խոչընդոտների հետ, սովորում հաղթահարել այն՝ ունենալով նոր ձեռքբերումներ: Իր հերթին այս գործընթացը պահանջում է մեզանից կանգ չառնել, անընդհատ գնալ առաջ, սովորել ամեն օր:
- Միշտ մտածել եմ այն մասին, թե ինչպիսի պետք է լինեն որակյալ կրթությունը և ժամանակակից դպրոցը: Առավել ևս հիմա, երբ ունեմ դպրոցը ղեկավարելու փորձ, պատասխանատվություն եմ կրում էլ ավելի կատարելագործելու նոր նախաձեռնություններս:
- Տեսնում եմ այս համատեքստում դպրոցը հետևյալ հարթություններում՝
- Դպրոցը որպես <u>տուն,</u> որտեղ քեզ միշտ սպասում են, ժպիտով դիմավորում և ճանապարհում:
- Դպրոցը իբրև <u>ապակե կառույց</u>, որտեղ ամեն ինչ մաքուր, պարզ, թափանցիկ, հասանելի և հասկանալի է:
- Դպրոցն իբրև <u>համայնքի</u> «աշխարհի կենտրոն», որտեղ բոլոր աշակերտները, ուսուցիչները, աշխատակիցներն ունեն ստեղծագործելու, անձի արտահայտման ազատություն ունենալու հնարավորություն, իսկ համայնքի բնակիչները նույնպես առավելագույնս օգտվելու դպրոցի հնարավորություններից՝ զարգանալու, սովորելու. անկախ տարիքից՝ դպրոցը բոլորինն է:
- Դպրոցը իբրև մի <u>թանգարան,</u> որտեղ պահպանվում են լավագույն ավանդույթները, և դրա հետ մեկտեղ ստեղծվում է բոլորիս «վաղը»:
- Դպրոցը իբրև <u>գիտելիքի դարբնոց,</u> որտեղ յուրաքանչյուր ուսուցիչ պատրաստ է և միշտ սովորում է ու, ամենակարևորը, պատրաստ է ամեն օր տալ, նվիրել իր գիտելիքը և փորձը ոչ միայն աշակերտին, գործընկերոջը, այլև հավասարապես բոլորիս՝ սիրով կրթվելու սուրբ նպատակին իրենց կյանքը նվիրող ընկերների հետ, քանզի վստահ եմ՝ ուսուցիչը ծնվում է նվիրվելու, իր սերը և ունեցածը տալու համար առաջին հերթին:


ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱ-ԿԵՐՊ
ՄԻՆԻ ԱՅԳԻ
ՃԱՇԱՐԱՆ


ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՆԳՈՆ
ՈՍԿԵ ՑԼԻԿ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ


ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ


ՆՈՐԱՐԱՐ ՋԵՐՄԱՏՈՒՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
ԴՊՐՈՑ
ՍՊԱՅԿԱ
ՋԵՐՄԱՏՈՒՆ


ՍՄԱՐԹ ԷԿՐԱՆՆԵՐ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ
ԻՄ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԸ ՔԱՐՏԵԶԱԳՐԵԼՈՎ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
ԳՅՈՒՂԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԿԵՐՏԸ
ԳՅՈՒՂԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՊԱՍՏԱՌ

Հանրային Հեռուստաընկերություն





Իմ կյանքը համայնքում






Դպրոցական լավագույն մինի այգի



Այցապատում



Խաղաղության կորպուս

/միջազգային համագործակցություն/




Ես եմ ռեժիսորը/ԿԶՆԱԿ/

